Ազգ
Azg
31 ՄԱՐՏ 2011 ՀԻՆԳՇԱԲԹԻ 56(4675)
ISSN: 1829-1651

# Անկեղծացել է Մինսկի խմբի ամերիկացի նախկին համանախագահի օգնականը

ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի նախկին համանախագահ Ռուդի Փերինեյի օգնական Ջեֆ Գոլդսթրին Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը նվիրված ԱՄՆ Քարնեգի հիմնադրամում տեղի ունեցած համաժողովում, «Ամերիկայի ձայն» ռադիոկայանի փոխանցմամբ, մասնավորապես ասել է. «Հեյդար Ալիեւի մահվանից հետո նրան փոխարինած Իլհամ Ալիեւի հետ ԱՄՆ-ն լուրջ հույսեր է կապել՝ մտածելով, որ նրա արեւմտյան կրթությունն ու տարիքը դրականորեն կազդեն գործընթացի վրա, բայց այս հույսերը չարդարացան: Ռոբերտ Քոչարյանի եւ Իլհամ Ալիեւի առաջին հանդիպումից հետո պարոն Փերինեյն ինձ ասաց, թե երկու ղեկավարների խոսակցությունից իրեն պարզ դարձավ, որ նրանք ներքին համաձայնության են եկել՝ շարունակելու բանակցությունները գործնականում առանց իրական առաջընթացի, պահպանելով ստատուս քվոն»:

Հ. Ա.

# Ի՞նչ է հայտնաբերվել պանիր արտադրողներին ստուգելիս

*Կաթի առաջնային մշակումը խիստ ցածր մակարդակի վրա է*

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

Պանիրը հայ ընտանիքների սեղանի պարտադիր ուտեստն է, որին առնչվող իրադարձությունն անմիջապես դառնում է քննարկման առարկա: Այդպես եղավ անցյալ տարի, երբ այս ապրանքի արտադրողները, ակնհայտ հակամրցակցային համաձայնությամբ բարձրացրին իրենց ապրանքի գները:



Պանրի նկատմամբ հետաքրքրությունը կրկին աճեց կառավարության նախորդ նիստից հետո, երբ վարչապետ Տիգրան Սարգսյանը հայտնեց այս ոլորտի ընկերություններում անցկացրած ստուգումների մասին, սննդամթերքի անվտանգության հայտնաբերված խախտումները անվանելով խիստ վտանգավոր եւ մտահոգիչ: Նա նաեւ խոստացավ 6 ամիս անց կրկնել ստուգումները եւ դրանց արդյունքները հրապարակային դարձնել: Բնական է, հարցեր առաջացան, թե ի՞նչ է հայտնաբերվել վարչապետի վերահսկողական ծառայության անցկացրած ստուգումներով: Եթե համառոտ, ապա լաբորատոր ստուգումները հայտնաբերել են առողջության համար վտանգավոր աղիքային ցուպիկի խմբի եւ այլ մանրէներ, ֆիզիկաքիմիական ցուցանիշների անհամապատասխանություն տեխնոլոգիական ստանդարտներին եւ պանրի վրայի մակնշմանը:

Ծառայությունն ուսումնասիրությունն իրականացրել է 36 մեծ ու փոքր խանութներից ընտրելով 47 արտադրողի 115 նմուշ պանիր: Պարզվել է, որ 12 ընկերությունների արտադրած պանրի 15 նմուշները մանրէաբանական ցուցանիշներով չեն համապատասխանել տեխնիկական կանոնակարգի պահանջներին, ինչը կարող է վտանգավոր լինել մարդու առողջության համար: Վերահսկողության ծառայության պետ Սարգիս Գրիգորյանը օրինակ է բերել խմորասնկերի առկայությունը պանրի մեջ, որը պատահել է, երբ սահմանված նորմատիվը գերազանցել է հազար անգամ:

*Տես էջ 3*

**ՃԱՊՈՆԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ**

# Հայ մանուկների նկարչական ժպիտը՝ լոնդոնյան օլիմպիադային

**2012 թվականին լոնդոնյան ամառային օլիմպիական խաղերին աշխարհի հարյուրից ավելի երկրների երեխաների մեջ հայ մանուկները ներկա կլինեն մեր երկրի ժպտացող արեւի գույներով: Ամիսներ առաջ ճապոնական կառավարության նախաձեռնությունը՝ ստեղծելու միասնական աշխարհի պատկերացումների մեկ ընդհանուր կտավ՝ երեխաների հայացքով, սիրով ընդառաջեց օլիմպիական խաղերին մասնակից ամեն երկիր, նաեւ Հայաստանը: Միեւնույն չափսի (5 մx1 մ) ու որակի ճերմակ պաստառին տարբեր ազգի երեխաներ իրենց պատկերացումներն էին նկարելու եւ ուղարկելու Ճապոնիա: Հայտնի իրադարձություններով պայմանավորված, դրանք այժմ կուղարկվեն բրիտանական մայրաքաղաք, եւ ամենայն հավանականությամբ աշխարհի 100-120 երկրների գունագեղ այդ կտավները օլիմպիադայի բացմանը կցուցադրվեն իրար**



**միացված՝ խորհրդանշելով մոլորակի ժողովուրդների միասնականության ու երկրի ամբողջականության գաղափարը: Ճապոնական մտածողությունը թերեւս միայն կարող էր նման հրաշալի նախաձեռնություն հանդես բերել-միասնություն՝ մանկան հայացքի ներքո: Սա իրոք այդպես էր: Եվ ամեն ոք, ով ներկա է եղել երեկ ետմիջօրեին Գեղագիտական ազգային կենտրոնի մոտ եւ տեսել հայ երեխաների հրաշալի կտավը, այլ բան չի կարող վկայել: Կենտրոնի ստուդիա-քոլեջի 45 սաներ իրենց հետքերն են դաջել ճերմակ պաստառին, որը շաբաթներ շարունակ իրեն է ձգել մանուկների երեւակայական պատկերացումների խայտաբղետ ու զարմանահրաշ աշխարհը, միայն իրենց բնորոշ գույների ուրախ բազմազանությամբ ու պատկերի ընկալման անմեղությամբ: Նրանք նկարել են իրենց մտքերն ու իրենց երազները ու գրել անունները՝ Մերի 6, Անի 8, Էլեն 7,5, Արթուր 4-թռչուններ, ծաղիկներ, ծաղկած նուռ, սիրամարգ, կրիա, մոլորակ, կենաց ծառ, Արարատ ու Նոյյան տապան: «Եկան ու ի՜նչ աշխատեցին, ազատ, անկաշկանդ եւ շատ կենտրոնացած, հասկանալով, որ տարբեր ժողովուրդներ դա տեսնելու են, եւ Հայաստանը առաջինը պետք է լինի: Ամենակենտրոնում տեղ կար, մի հրաշալի երեխա ունենք՝ Սերոբը, 6 տարեկան, եկավ ու սկսեց նկարել, ինքը սիրում է կենդանիներ նկարել, սակայն, զարմանալի էր, եկեղեցի նկարեց, սա խորհուրդ ունի իր մեջ: Այս որակի ստեղծագործական ունակությունը հայկական բրենդ է: Պետք է պահպանել այն», ոգեւորված էր ու հուզված կենտրոնի ստուդիա-քոլեջի գեղարվեստական ղեկավար Համլիկ Հակոբյանը:**

**Եվ իրոք հուզիչ էր ու գեղեցիկ տեսարանը: Աբովյան փողոցի այս հատվածն ասես ծաղկած այգի լիներ՝ երեխաների անուշ ժպիտներով, թրթռուն շորերով: Մեկ-երկու օրից խաղաղության մեր կտավը կմեկնի Լոնդոն: Գեղագիտության ազգային կենտրոնի տնօրեն Լեւոն Իգիթյանը համոզված է, որ հայ երեխաները բարձր գնահատական են ստանալու: «Մենք սովոր ենք, մեր երեխաները որտեղ էլ ներկայանան, առաջին մրցանակի են արժանանում: Ափսոսում եմ, որ այս գործը չենք կարող մեզ մոտ պահել: Տարիներ կանցնեն, ես չգիտեմ նրանցից քանիսը նկարիչ կդառնա, բայց ինչ մասնագիտություն էլ որ ստանան, լավն են լինելու: Մեր նպատակը գենետիկ այս բարձր որակը պահպանելն է, չռայլել, գուրգուրել, եւ երբ հասակ առնեն, իմանան, որ իրենք հպարտ ժողովուրդ են, բարձրարժեք մշակույթ ունեցող եւ ամեն երկրի հետ կարող են խոսել որպես հավասարը հավասարի հետ»:**

**ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ**

# Րաֆֆի Հովհաննիսյանն իր հացադուլի «առաջին արարն» ավարտված հայտարարեց



**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

«360 ժամ առաջ ես որպես հպարտ եւ իրավազրկված քաղաքացի, մեր պետական դրոշով զինված՝ մտա Ազատության հրապարակ, այս երկու շաբաթների քաղաքացիական ծոմ-հացադուլը, որ կրում է «Ծոմ ազատության» խորագիրը, ես նվիրում եմ Հայաստանի Հանրապետության եւ Արցախի Հանրապետության երկրորդ տասնամյակի տարեդարձին». ահա այսպես սկսեց երեկ իր խոսքը «Ժառանգության» առաջնորդ, Ազատության հրապարակում երկու շաբաթ հացադուլ անող **Րաֆֆի Հովհաննիսյանը** եւ ավարտական նոտայի վրա հայտարարեց «Ազատության ծոմի» առաջին արարի ավարտը: Բայց որպեսզի ամեն ինչ տեղը-տեղին լինի՝ նրա խոսքի շեշտադրումները փոխանցենք ըստ հերթականության: Նա նշեց, թե Ազատության հրապարակ-քաղաքացիական սրբավայրը այս վերջին շաբաթների ընթացքում առանց խտրականության կամ հատվածապաշտության դարձել է նույն արժեքների՝ ազատության, անկախության, ինքնիշխանության, ազգի միասնության հավաքատեղի-խորհրդանիշը, եւ անկախ նրանից, որ գործող իշխանությունները դեռ չեն հանգել «քաղաքականության մեջ պահի ճակատագրականության գիտակցման մեջ իրական փոփոխության», հասարակությունը՝ ալեհերից մինչեւ մտավորական, հատկապես երիտասարդությունը, ապրել է հոգու եւ գիտակցության բարձրացման մի հանգրվան»: Համենայն դեպս այդպես էր տեսել Ր. Հովհաննիսյանը. «Մենք տեսնում ենք, որ հայ ժողովուրդը մերժում է կուսակցապետության վտանգը, որ այսօր տարածվում է մեր երկրի վրա: Եվ թե՝ պետք է վերջացնել իշխանական կոռուպցիան, շահի բախումը, հացի, աշխատանքի, մայրենի լեզվի, մաքուր միջավայրի իրավունքը վերադարձնել հայ ժողովրդին: Ալեհերից մինչեւ երիտասարդություն գիտակցումը կա, որ մեր արտաքին խնդիրները կլուծվեն միայն ներքին ժողովրդավարությամբ եւ ազատությամբ, Արցախի հարցը՝ ԼՂՀ սահմանադրական սահմաններով Հայաստանի կողմից դե յուրե ճանաչմամբ, Թուրքիա-Հայաստան հարաբերություններում աղետաբեր եւ հակապետական, հակազգային եւ հակաիրավական արձանագրությունների հետկանչմամբ»:

*Տես էջ 2*

# Երկրից մեկնածների թիվը գերազանցում է ժամանածների թվին

Միգրացիոն պետական ծառայության վերջին տվյալներով՝ 2010թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին միգրացիայի բացասական սալդոն (հանրապետությունից մեկնածների թվի գերազանցումը հանրապետության ժամանածների թվին) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 4,9 հազարով կամ 19,5 %-ով եւ կազմել է -29,9 հազար մարդ, իսկ ՀՀ քաղաքացիների մասով՝ -41,2 հազար մարդ:

Դեկտեմբերին միգրացիայի դրական սալդոն կազմել է 46,5 հազար մարդ, նախորդ տարվա դեկտեմբերի 13,7 հազարի դիմաց: 2010-ի հունվար-դեկտեմբեր ամիսներին ուղեւորահոսքերի ընդհանուր ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 631,0 հազար մարդով, կամ 21,8 %-ով եւ կազմել 352.000 մարդ: Օդային տրանսպորտով սահմանը հատած ուղեւորների տեսակարար կշիռը ուղեւորափոխադրումների ընդհանուր ծավալում կազմել է 45,4%:

Հ. Հ.

# Աժուբալիսը դիպուկահարներին միակողմանի հետքաշելու առաջարկ է արել նաեւ Ադրբեջանի՞ն

**«Ես առաջարկեցի Հայաստանին միակողմանի հետ քաշել դիպուկահարներին, որպեսզի օրինակ ծառայի, բայց մերժում ստացա, ինչպես նաեւ Ադրբեջանում», բալթյան «Դելֆի» կայքէջին տված հարցազրույցում իր հարավկովկասյան այցն այսպես է ամփոփել մարտի 14-19 տարածաշրջան այցելած ԵԱՀԿ գործող նախագահ, Լիտվայի արտգործնախարար Աուդրոնիուս Աժուբալիսը, առանց հստակեցնելու, թե ինչն է մերժել Ադրբեջանը՝ դիպուկահարներին միակողմանի հեռացնելու առաջա՞րկ, թե՞ մեկ այլ բան:**

**Լիտվայի ԱԳ նախարարը նշել է. «Այդպես համընկավ, որ երբ ես ժամանեցի, սպանվել էր ադրբեջանցի երեխան, իսկ երբ Հայաստան էի անցնում Վրաստանից, սպանեցին հայ զինվորականի»: Նրա խոսքերով, դիպուկահարները ոչ մի կողմում էլ ռազմական կամ քաղաքական հաջողություն չեն բերի, հակառակը, հետքաշումը կլիներ դրական արդյունք:**

**Աժուբալիսը դրական է գնահատել, որ կողմերը Սոչիում համաձայնել են «սկսել խորհրդակցություններ շփման գծում միջադեպերի հետաքննության մեխանիզմի առնչությամբ»: Խնդրելով ԵԱՀԿ գործող նախագահի հատուկ ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկին հետաքննել միջադեպերը՝ Աժուբալիսը դեռեւս տարածաշրջանում եղած ժամանակ մտահոգություն է հայտնել երկու կողմերի ուժեղ սպառազինվելու կապակցությամբ, «ինչն ի ցույց է դնում վստահության բացակայությունը, իսկ բանակցությունները տեղի են ունենում միայն այն ժամանակ, երբ չկա լարվածություն»:**

**Լիտվացի դիվանագետն իր այցելությունը «դաշտային» է որակել, իր համոզմամբ ներկայացնելով, որ Սոչիի Հայաստան-Ռուսաստան-Ադրբեջան նախագահական եռակողմ հանդիպումից հետո «որոշակի տարածություն կա առաջխաղացման»:**

**Ա. Հ.**

# Դեկտեմբերին ձվի շուկայում ստեղծված դեֆիցիտն արհեստական էր

*Լուսակերտի թռչնաֆաբրիկան տուգանվեց 100 մլն դրամով*

Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովը երեկ տուգանեց Լուսակերտի տոհմային թռչնաբուծական ֆաբրիկային անցյալ տարվա դեկտեմբերի վերջին գերիշխող դիրքի չարաշահման համար, որն արտահայտվել էր ընկերության արտադրանքը շուկա չհանելով եւ որի հետեւանքով այդ օրերին ստեղծվել էր ձվի արհեստական դեֆիցիտ: Տուգանքը կկազմի 100 մլն դրամ, որը կազմում է ընկերության նախորդ տարվա շրջանառության 2 տոկոսը, ինչը սահմանված է օրենքով:



Ինչպես հայտնեց հանձնաժողովի նախագահ **Արտակ Շաբոյանը**, 2010-ի դեկտեմբերի 23-27-ը ձվի շուկայում ստեղծված իրավիճակի կապակցությամբ հանձնաժողովը ուսումնասիրել է այս շուկայում գործող բոլոր 6 տնտեսավարողների գործունեությունը: Որոշվել է վարչական վարույթ հարուցել գերիշխող դիրք ունեցող Լուսակերտի տոհմային թռչնաբուծական ֆաբրիկայի նկատմամբ: Ընթացքի մեջ է նաեւ «Արաքս» թռչնաֆաբրիկայի նկատմամբ հարուցված վարույթը:

Հանձնաժողովի ուսումնասիրությունների եւ տնտեսվարողներից ստացված տեղեկությունների հիման վրա պարզվել է, որ անցյալ տարվա դեկտեմբերի նշված օրերի ընթացքում ձու արտադրողների մոտ եղել է պահեստավորված ձու, որի գերակշիռ մասը պատկանել է Լուսակերտի թռչնաֆաբրիկային: Սակայն վերջինս իր արտադրանքի մի մասը չի առաքել առեւտրի օբյեկտներին, ինչն էլ առաջացրել է ձվի դեֆիցիտ: Առկա ձուն մնացել է պահեստավորված պահեստներում կամ էլ տրվել է ընկերության առաքիչներին, որոնք չեն հասցրել ապրանքը առեւտրի կետեր: Հանձնաժողովի ուսումնասիրության արդյունքներից հայտնի է դարձել, որ այդ մի քանի օրվա ընթացքում հիշյալ ընկերության պահեստներում եւ առաքիչների մոտ մնացել է եւ խանութներ չի ուղարկվել զգալի քանակությամբ ձու, որը երբեմն հասել է օրական 1 մլն հատը: Ընդ որում, առաքված ձվի դիմաց հաշիվ-ապրանքագրերն առեւտրի կետերին տրվել են մի քանի օր ուշացումով՝ հակառակ այն փաստի, որ դրան նախորդող եւ հաջորդող օրերին այդ գործընթացը կատարվում էր նույն օրվա ընթացքում:

Թռչնաֆաբրիկաներից ստացված տեղեկություններից եւ փաստաթղթերի ուսումնասիրություններից պարզվել է նաեւ, որ որոշ տնտեսվարողներ ներկայացրել են կեղծ փաստաթղթեր: Մասնավորապես, Լուսակերտի թռչնաֆաբրիկայի իրացման փաստաթղթերից պարզվել է, որ «Նոր Զովք» սուպերմարկետների ցանցին առաքվել է 220 հազար ձու, բայց ուսումնասիրություններով պարզվել է, որ սուպերմարկետում այդ օրերին անհամեմատ քիչ ձու է իրացվել:

Լուսակերտի թռչնաֆաբրիկայի ներկայացուցիչ **Մանասե Եփրեմյանը,** հակառակ հանձնաժողովի նիստի ընթացքում ներկայացված բազմաթիվ թվային ցուցանիշների, հայտարարեց, որ «ներկայացված փաստերը մտացածին են»: Նա որեւէ կերպ չկարողացավ հերքել փաստը, որ ընկերությունն ունեցել է պահեստներում եւ առաքիչների մոտ ձու, որը չի հասցվել խանութներ: Այս մասին ուղղակի տրված հարցին նա չպատասխանեց՝ ասելով միայն, որ Լուսակերտի թռչնաֆաբրիկան դեֆիցիտ չի ստեղծել: Նույն անորոշ պատասխանները նա տվեց հանձնաժողովի նիստից հետո մեր հարցերին, ասելով միայն, որ դեֆիցիտը ստեղծվել է պահանջարկի ավելացման հետեւանքով: Մեր այն դիտարկմանը, որ այդ օրերին միայն ձվի պահանջարկը չի բարձրանում, բայց այլ ապրանքների դեֆիցիտ չի առաջացել, Մանասե Եփրեմյանը չպատասխանեց: Իսկ մեկ այլ լրագրողի հարցին, թե հնարավո՞ր է, որ ձվի դեֆիցիտ լինի նաեւ Զատկի նախօրեին, Լուսակերտի թռչնաֆաբրիկայի ներկայացուցիչը դրական պատասխանեց, ասելով, որ պահանջարկի ավելացումից դարձյալ ձվի նման դեֆիցիտ կլինի: Ինչեւէ:

Հանձնաժողովը միաձայն որոշեց տուգանել Լուսակերտի թռչնաֆաբրիկային, բայց դատելով նրա ներկայացուցչի մոտեցումից, դա դժվար թե զսպող հանգամանք դառնա այս ընկերության համար: Նույնը կարելի է ասել իրենց ունեցած գերիշխող դիրքը չարաշահող կամ հակամրցակցային համաձայնություններ կայացնող այլ ընկերությունների մասին, ինչը պայմանավորված է ավելի շուտ հոգեբանական խնդիրներով: Մեր բիզնեսը սովոր չէ եւ չի ցանկանում աշխատել քաղաքակիրթ երկրներին բնորոշ ցածր շահութաբերությամբ՝ լինի 15 տոկոս, թե 25 տոկոս: Նրանք սովոր են, որ շահութաբերությունը լինի առնվազն կրկնակի՝ ստվերային գործունեության, գների հակաշուկայական եւ չհիմնավորված բարձրացումների, իրենց աշխատակիցներին ցածր աշխատավարձեր վճարելու շնորհիվ: Այդուհանդերձ, դրականն այն է, որ այս ամենը կարգավորելուն կոչված կառույցը՝ տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովը, վերջապես սկսում է իր գործունեությունն արդարացնելու նշաններ ցույց տալ:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

*ՌԵՊԼԻԿ*

# Այսքան անթերի ՀԱԿ-ը...

**Ժողովրդավարության ու բացախոսության մասին պարբերաբար հայտարարություններ անող Հայ ազգային կոնգրեսը հերթական անգամ ի ցույց դրեց իր դեմքը: Մասնավորապես Լեւոն Զուրաբյանն այնպիսի մի հայտարարություն է արել, որին ինչ-որ որակում տալն անգամ դժվար է: Նա ասել է, որ «եթե որեւէ քաղաքական ուժ ընդդիմություն է կամ իրեն ընդդիմություն է համարում, չպետք է զբաղվի Կոնգրեսի քննադատությամբ, իր ժամանակի 90 տոկոսը չպետք է նվիրի Կոնգրեսի քննադատությանը՝ դրանով ցույց տալով, թե իրականում ինչով է զբաղվում»: Որ Զուրաբյանը «սիրում է» լուրջ վրիպումներ թույլ տալ, հայտնի է դեռ այն ժամանակներից, երբ նա ՀՀ առաջին նախագահի մամուլի քարտուղարն էր: Նրա որոշ արտահայտություններ երկար ժամանակ իշխանությունները փորձում էին մանրակրկիտ սվաղել, որպես կանոն՝ ապարդյուն: Այս անգամ մեկ մտքի մեջ միանգամից երկու, մեղմ ասած, վրիպում կա: Նախ, մի՞թե ՀԱԿ-ն իրեն իսկապես անթերի է համարում, որին չի կարելի քննադատել: Իհարկե, սա զարմանալի չէ, որովհետեւ անկախությունից հետո քննադատության նկատմամբ ամենաանհանդուրժողը եղել է ԼՏՊ-ի իշխանությունը՝ ՀՀՇ-ի գլխավորությամբ: Բայց այդ ամենն այսօր եւս ի ցույց դնել այսպիսի բացահայտությամբ միայն նշանակում է, որ այս ուժը ոչ միայն չի փոխվել, այլեւ ավելի է տրվել կարծրատիպերին ու բացահայտ հեռացել ժողովրդավարությունից: Դրա ցայտուն օրինակներից մեկը հենց ԼՏՊ-ի հայտնի հրամանն ու «մունաթն» էր հանրահավաքի եկած ժողովրդին, թե՝ ձեններդ կտրեք, ոնց կասեմ, այնպես էլ կանեք: Ի վերջո, ընդդիմադիր որեւէ ուժ պարտավոր չէ հալած յուղի տեղ ընդունել ՀԱԿ-ի ասածներն ու քայլերը: Եվ եթե, ասենք, Ժիրայր Սեֆիլյանը քննադատում է ՀԱԿ-ին, զգուշացնում, որ այսպես շարունակելու դեպքում կհայտնվի լուսանցքում, կարելի՞ է ասել, որ նա իշխանությունների դրածոն է կամ իշխանությունների պատվերն է կատարում: Այդպես կարող է մտածել միայն հիվանդ երեւակայություն ունեցող մարդը: Կամ՝ ո՞վ ասաց, որ ԼՏՊ-ն կամ մարդ-կուսակցություններից բաղկացած ՀԱԿ-ն ավելի մեծ կշիռ ունի, քան ՀՅԴ-ն, «Ժառանգությունը», հենց նույն «Սարդարապատ» շարժումը: Ավելին, ո՞վ է ասել, թե ՀԱԿ-ը վերջիններից ավելի ընդդիմադիր է: Եթե մարդիկ գտնում են, որ ՀԱԿ-ն իր գործողություններում սխալներ է թույլ տալիս, վստահաբար նրանց խնդիրը ընդդիմադիր դաշտում կանոնավորություն մտցնելու ձգտումն է, ինչը ԼՏՊ-ին ձեռնտու չէ, քանի որ նա միշտ էլ իրեն համարել է միակն ու անկրկնելին: Եվ վերջապես, Զուրաբյանի նշյալ հայտարարությունից (եւ ոչ միայն նշյալ) այնպիսի տպավորություն ես ստանում, թե Հայաստանում ՀԱԿ եւ ընդդիմություն բառերը հոմանիշներ են: Անկեղծ ասած, մենք երկար փնտրեցինք տարբեր բառարաններում, բայց նման հոմանիշների չհանդիպեցինք: Եթե Զուրաբյանը նման բառարան գիտի, թող մեզ էլ տեղն ասի:**

**Հ.Գ.- Հա, Զուրաբյանին մի խորհուրդ այնուամենայնիվ, չէր խանգարի: Մեր կողմից չէ, նման իրավունք մենք մեզ չենք վերապահի: Իր իսկ կողմից՝ ասված ուղիղ 16 տարի առաջ՝ 1995 թ. մարտի 30-ին. «Ես ուղղակի խորհուրդ կտայի ընդդիմությանը՝ արիությամբ ընդունել պարտությունը»:**

Հ. Ս.

# Եվս մեկ հատոր՝ Հայոց ցեղասպանության մասին

**Այսօր՝ ժամը 14.00-ին, Ազգային գրադարանում տեղի կունենա Ֆիլիպ Վիդըլիեի «Թուրքական գիշեր» գրքի հայերեն տարբերակի շնորհանդեսը: Գրող Ֆիլիպ Վիդըլիեն նաեւ Ֆրանսիայի ժամանակակից պատմաբաններից է: «Թուրքական գիշեր» գիրքը թարգմանվել է տարբեր լեզուներով՝ հունարեն, ռուսերեն, խորվաթերեն, բուլղարերեն: Իսկ հայերեն թարգմանել է թարգմանիչ Պարգեւ Շահբազյանը: Բացի գեղարվեստական արժեքից՝ գիրքն ունի նաեւ պատմական նշանակություն: Այն վերաբերում է 1895-96 թվականների համիդյան կոտորածներին եւ 1915-ի Հայոց ցեղասպանությանը:**

Ի. Պ.

# Ի՞նչ է հայտնաբերվել պանիր արտադրողներին ստուգելիս

*1-ին էջից*

Ըստ մասնագետների, դա հնարավոր է պանրի՝ բաց վիճակում վաճառքից, ինչը ենթադրել է տալիս, որ այդ խանութներում չեն պահպանվում պանրի իրացման տարրական սանիտարահիգիենիկ պայմանները:

Այնուհանդերձ, փորձագետները առավել կարեւոր են համարում կաթի առաջնային մշակման հիգիենան, որի բացակայությունն առաջին պատճառն է հայկական պանրի հիգիենիկ նորմատիվների խախտման: Նրանց համոզմամբ, խիստ կարեւոր է կովի կրծքի մաքրությունը, քանի որ կաթը կաթնագեղձում ստերիլ է, իսկ երբ արտազատվում է, բարենպաստ պայմաններ են ստեղծվում մանրէների՝ կաթի մեջ ներթափանցելու համար: Հայկական պանրի մրցունակ լինելու եւ սպառողների անվտանգության համար, նրանց կարծիքով, պետք է պահպանվի նախեւառաջ այս պայմանը: Սա ի գիտություն այս խորհուրդը զավեշտի վերածած, դրանով իսկ սեփական տգիտությունը ի ցույց դնողների:

Ըստ սննդամթերքի անվտանգության հարցում Համաշխարհային բանկի ծրագրերի ղեկավար **Արտավազդ Հակոբյանի**, վարչապետի մոտ կայացած խորհրդակցության ժամանակ ինքը կարեւորել է կաթի ստացման հիգիենիկ պայմանների պահպանումը: Նա անհրաժեշտ է համարել կովի կիթով զբաղվողներին խորհրդատվություն տալ կովի կուրծքը 40 աստիճան գոլ ջրով լվանալու եւ դույլը մաքուր թանզիֆով ծածկելու մասին:

Կաթի առաջնային հիգիենայի համապատասխան խնդիրն ապացուցվում է նաեւ կաթի կամ կաթնամթերքի մեջ սոդայի առկայությամբ: Հակառակ արտադրողների հավաստիացումներին բնական կաթից պանիր արտադրելու մասին, բոլորի մոտ հայտնաբերվել էր փոշի կաթի տոկոս, ինչպես նաեւ սոդա: Սոդայով կանխում են կաթի թթվայնության բարձրացումը, ինչը խոսում է մանրէների բարձր քանակի մասին, ինչն էլ նշանակում է, որ առաջնային մշակումը խիստ ցածր մակարդակի վրա է:

Վարչապետի վերահսկողական ծառայության ղեկավարից տեղեկացանք նաեւ, որ ուսումնասիրված 615 կգ պանիրը, որտեղ մանրէները շատ են եղել, ոչնչացվել է, իսկ արտադրող 11 կազմակերպություն վարչական տույժի են ենթարկել:

Ինչպես նշեցինք վերեւում, հայկական պանիր արտադրողները միայն հիգիենիկ խնդիրը չէ, որ պետք է լուծեն, այլ նաեւ նրանց արտադրանքի մակնշումը պետք է համապատասխանի պարունակությանը: Մինչդեռ հայտնաբերվել են փաստեր, որ, օրինակ, «Լոռի» պանրի յուղայնությունը մակնշված 50 տոկոսի փոխարեն 17,2 տոկոս է եղել, խոնավությունը 44-ի փոխարեն՝ 54,1:

Վարչապետը եւ նրա վերահսկողական ծառայության ղեկավարը խոստանում են վերահսկողության տակ պահել սննդամթերքի, տվյալ դեպքում՝ պանրի անվտանգության հարցը: Ակնհայտ է, որ հիգիենիկ եւ որակական չափանիշների պահպանումը հայկական պանրի մրցունակ լինելու պարտադիր պայման է ինչպես մեր երկրում, այնպես էլ նրա՝ արտաքին շուկաներ դուրս գալու համար, որի հավանականության մասին վերջերս հաճախ է խոսվում:

# Չնայած կրծողների «ջանքերին»՝ գյուղատնտեսական տարին վատ չի սկսվել



Թեեւ գյուղատնտեսության ոլորտում հազարումի խնդիրներ կան, այնուամենայնիվ Հայաստանի ագրարագյուղացիական միավորման նախագահ **Հրաչ Բերբերյանը** կարծում է, որ գյուղատնտեսական տարին վատ չի սկսվել:

Երեկ «Հենարան» ակումբում՝ ասուլիսի սկզբում Հրաչ Բերբերյանը նախ անդրադարձավ մկնանման կրծողների ավելացման խնդրին, նրա խոսքով՝ կրծողները մեծ վնասներ են հասցրել ե՛ւ այգիներին, ե՛ւ աշնանացան ցանքին: Եթե կրծողների դեմ պայքարն անցյալ տարի ճիշտ ժամանակին սկսվեր, այսօր վնասները սակավ կլինեին: Կրծած ծառերը, ըստ Հրաչ Բերբերյանի, չեն վերականգնվի, մանավանդ եթե ծառի բունը վնասվել է շրջանաձեւ: Կրծողները նույնիսկ գետնի տակից են վնասել ծառերի բները: Այս երեւույթը հատկապես Արարատյան հարթավայրում արդեն մասսայական բնույթ է կրում: Հրաչ Բերբերյանի փոխանցմամբ՝ կրծողները վնաս են հասցրել նույնիսկ խաղողի այգիներին: Ստեղծված իրավիճակում կրծողների դեմ պայքարելու համար, ըստ բանախոսի, պետական լուրջ մոտեցումներ են հարկավոր. «Եթե ամեն մի նախարարի տեղակալ, վարչության պետ ու մարզպետ իրենց տեղերում լինեն եւ պատասխան տան իրենց արարքների համար, ապա մենք կունենանք նորմալ գյուղատնտեսություն»: Հ. Բերբերյանն ընդգծում է, որ գյուղատնտեսության համար պետության հատկացրած գումարները պետք է արդյունավետ ծախսվեն: Այնուհետեւ գյուղմթերքների սպասվելիք գների վերաբերյալ բանախոսը նշեց. «Օրինակ՝ լոլիկն այս տարի, անցյալ տարվա համեմատ, էժան է լինելու»: Ագրարագյուղացիական միավորումն Արարատյան հարթավայրում՝ 500 հեկտարի համար գյուղացիներին լոլիկի սերմ է անվճար բաժանել: «Խոստանում եմ, որ լոլիկն այս տարի ավելի էժան կլինի», հավելեց Հ. Բերբերյանը: Ապա շարունակելով խոսել գներից, սակայն այս անգամ ոչ թե գյուղմթերքների, այլ դիզվառելիքի գնից, նա ընդգծեց, որ այն շեշտակի թանկացել է: Իսկ ինչ վերաբերում է Հայաստանում պարարտանյութ արտադրելու հարցին. արդյոք տեղում արտադրելն ավելի արդյունավե՞տ չի լինի, քան ներկրելը, Հրաչ Բերբերյանը բացասական կարծիք հայտնեց: Նրա փոխանցմամբ՝ ազոտական պարարտանյութի հիմքը բնական գազն է. «Բնականաբար, եթե գազը ձեռք բերենք թանկ գնով, կունենանք եւ թանկ արտադրություն»:

Ի. Պ.

# Չճանաչված երկրներ

## Կդառնա՞ երբեւէ Իլհամ Ալիեւը Սեբորգայի ասպետ

Ադրբեջանի նախագահի հասցեով սահմանված աշխատավարձը տարեկան 228 հազար դոլար է (19 հազար՝ ամսական): Միայն այս եկամուտը կբավարարի Իլհամ Ալիեւին այս ամառը իր հանգիստը կազմակերպելու ֆրանս-իտալական սահմանին: Ալիեւը կարող է նաեւ հրավիրել արտգործնախարար Մամեդյարովին, քանի որ այս երկուսը այնտեղ հետաքրքրական, իրենց համար նույնիսկ զարմանահրաշ փաստերի կհանդիպեն: Բացի նրանից, որ այնտեղ՝ «մի փոքրիկ, այսպես կոչված «իտալական գյուղում» կա իսկական իշխանական պալատ՝ պետական դրոշով, դեռեւս օծվում են իսկական ասպետներ, ձուլվում են իսկական մետաղադրամներ, արդեն մի քանի տասնամյակ ապրում են ինքնորոշված՝ անկախ:

Սեբորգա անունով այդ գյուղ հասնելու համար ամենամոտ օդանավակայանը ֆրանսիական Նիցայինն է, որտեղից արդեն մեքենայով մտնելով Իտալիա եւ հասնելով Բորդիգերա քաղաք, եւս 45 րոպե ընթանալով ծովափին հակառակ ուղղությամբ՝ կհանդիպեք ժամապահի: Վերջինիս անցակետի վերեւում փողփողում է ամենեւին էլ ոչ իտալական դրոշը, այլ կապույտ-սպիտակ մի դրոշ, որի կողքին կա գրություն՝ «Բարի գալուստ Սեբորգայի անկախ իշխանություն»: Եվրոպայի հենց սրտում, Իտալիա պետության մեջ այս անկախ իշխանությունը վաղուց ապրում է սեփական օրենքներով եւ իտալական իշխանությունների լիակատար թողտվությամբ:




### Սեբորգան երբեք չի պատկանել Իտալիային

Սեբորգան հայտնի է դեռեւս 400 թվականից՝ որպես փիլիսոփայական դուալիզմ ուղղության կենտրոն: Հիմնականում պապական հալածանքների դիմագրավելով՝ Սեբորգան, այնուամենայնիվ երբեք չի կորցրել իր ինքնավարությունը, իսկ իշխանության համար ամենաանորոշ ժամանակաշրջանը սկսվում է 1729-ի հունվարի 20-ից: Հենց այդ օրը Փարիզում, «Ֆրանսիայի բոլոր ղեկավար անձանց ներկայությամբ», Սեբորգան ու նրա շրջակա հողերը վաճառվեցին «Բարձրագույն մագիստրոսի» շքանշանակիր Վիտորիո Ամադեո 2-րդին, որը Սարդինիայի միապետն էր, Միջերկրական ծովով ընթացող հայտնի «Աղի ճանապարհի» տերը, հայտնի մասոն: Այս քայլի վերաբերյալ իր դժգոհությունը հայտնեց Վատիկանը, քանի որ Սեբորգայում «որոշ օբյեկտներ» այդ տարիներին պատկանում էին իրեն: Սակայն այս իրադարձությունը պաշտոնապես գրանցված չէ Սարդինիայի թագավորության փաստաթղթերում: Ավելի ուշ, երբ 1748-ին Սարդինիայի թագավորությունը մտավ Ջենովայի հանրապետության կազմի մեջ, նույնպես ոչ մի պաշտոնական փաստաթուղթ չի վկայում, որ Սեբորգան՝ Սարդինիայի կազմում լինելով, մտնում է Ջենովայի հանրապետություն, ավելին՝ 1815-ի Վիեննայի կոնգրեսը չի ամրագրում Սեբորգան որպես Սարդինիայի մաս: Իսկ ամենահետաքրքրականն այն է, որ 1861-ին ընդունված «Իտալիայի միավորման մասին» ակտում նույնպես ոչ մի խոսք գրված չէ Սեբորգայի մասին, հետեւաբար Սեբորգայի իշխանությունը դե յուրե ընդգրկված չէ 1946-ին կազմավորված իտալական հանրապետության կազմում:

Այս ամենը հիմք է տվել Սեբորգայի արդեն մի քանի սերունդ ասպետներին արդարացիորեն հայտարարելու. «Իտալիան չունի Սեբորգայի նկատմամբ ոչ մի իրավունք, Հռոմը չի կարող հավակնել մեր հողերին, քանի որ Սեբորգան երբեք չի եղել Իտալիայի մաս»: Իտալիայի բռնապետ Բենիտո Մուսոլինին անգամ Սեբորգան անվանում էր «այլ պետություն»: Այսօր գործող իտալական հանրապետության սահմանադրությունը ոչ մի հոդվածով, ոչ մի պարբերությամբ չի անվանում Սեբորգան «որպես Իտալիայի մաս»:

### Հյուպատոսարաններ՝ աշխարհի 35-ից ավելի երկրներում

1963-ին Սեբորգայի ժողովուրդը ազատ ընտրություններով Ջորջե Կարբոնեին ընտրեց իշխան՝ անվանելով Ջորջե 1-ին: Կառավարման հենց առաջին տարիներին Ջորջե 1-ինը հայտնաբերեց փաստեր, որ «Սեբորգան երբեք չի պատկանել Իտալիային», կան ոչ միայն իշխանության պահոցներում, այլեւ, օրինակ, Նիցայի ֆրանսիական արխիվներում: Իտալիայի դեմ իրավաբանական պատերազմը (Սեբորգան երբեք Հռոմի դեմ ռազմական առումով չի պատերազմել-Հ. Ա.) ոգեւորեց սեբորգացիներին, որոնք 1995-ին վերահաստատեցին Ջորջե 1-ինի իշխանական տիտղոսը եւ նույն թվականի ապրիլի 25-ին 304 կողմ, 4 դեմ ձայների հարաբերակցությամբ ընդունեցին Սեբորգայի սահմանադրությունը: Շուտով ընտրեցին նաեւ կառավարության անդամներին, ստեղծեցին սեփական անձնագրերը, հաստատեցին սեփական բյուջեն. ընդամենը 326 քաղաքացի, սակայն 2000 ժամանակավոր քաղաքացի ունեցող Սեբորգան ունի բանակ եւ պաշտպանության նախարար: Ճիշտ է՝ նախարարը եւ ամբողջ բանակն ընդամենը երեք հոգի են, բայց, փաստորեն, արդեն քանի տարի Սեբորգան կարողանում է պահպանել իր անվտանգությունը, ինքնորոշված լինելու իրավունքը եւ տարածքների անձեռնմխելիությունը:

Ավելին՝ Սեբորգան ձեռնամուխ է եղել հասնելու իր միջազգային ճանաչմանը: Այսօր արդեն Սեբորգա մուտք գործելու համար դուք պետք է ունենաք Սեբորգայի հյուպատոսի կնիքով փաստաթուղթ: Իսկ Սեբորգան հյուպատոսարաններ է բացել աշխարհի ավելի քան 35 երկրներում, այդ թվում՝ Ռուսաստանում: 1996-ի մայիսի 16-ին Սեբորգայի իշխան Ջորջիո 1-ինը ստորագրեց հրամանագիր, որով «ընդլայնվում են Մոսկվայում Սեբորգայի հյուպատոսու Բորեւ Վլադիմիրի լիազորությունները՝ երկու երկրների հարաբերություններում որակական աճ ապահովելու նպատակով»:

2009-ի նոյեմբերի 25-ին իշխան Ջորջիո 1-ինը մահացավ: Նույն թվականի դեկտեմբերի 1-ին Սեբորգայի ժամանակավոր կառավարիչ նշանակվեց Ջովանի Դարտիերին: Արդեն 2010-ի ապրիլի 25-ին Սեբորգայի նոր իշխան ընտրվեց 31-ամյա բիզնեսմեն եւ նախկինում «Ֆորմուլա-1»-ի մասնակից Լուգանո Մարչելո Մենեգասոն, որին տրվեց Մարչելո 1-ին անունը: Պաշտոնապես նա ստանձնեց լիազորությունները 2010-ի մայիսի 22-ից: Մարչելո 1-ինը շատ սերտ, բարեկամական կապեր ունի Մոնակոյի իշխան Ալբերտի հետ. «Իմ ամենամեծ նպատակը նոր աշխատատեղերի ստեղծումն է Սեբորգայում, ինչպես նաեւ մեր սրբազան պայքարը հանուն մեր անկախության՝ Իտալիայից», ստանձնելով իշխանի լիազորությունները՝ ասաց Մենեգասոն:

### Ինչո՞ւ է լռում Իտալիան

Ինչպես վերը նշեցինք, Իտալիան երբեք չի պատերազմել Սեբորգայի դեմ, սակայն «փաստաթղթային պայքար» միշտ եղել է: Երբ Սեբորգան նոր էր սկսել իր անկախության պայքարը, Իտալիայում դա որակվեց որպես «հերթական իտալական կրկես», ոչ մի լուրջ բան: Հետո, սակայն, իտալական իշխանությունները ամենուր հայտարարում էին, որ «բռնելու են Սեբորգայի պարագլուխ-անջատողականներին ու 30 տարով նստեցնեն բանտ»: Ավելի ուշ, երբ Հռոմի համար հասկանալի դարձավ, որ «բոլոր փաստաթղթերը, միջազգային իրավունքը, պատմությունը» իր դեմ են, ստիպված եղավ «ժողովրդավարություն խաղալ»: Սրանից հետո, փաստորեն, Իտալիան «իր համար է», Սեբորգան՝ իր: Ճիշտ է, ժամանակ առ ժամանակ Հռոմն առաջարկում է Սեբորգայի իշխաններին՝ վերամիավորվել «լայն ինքնավարության հեռանկարով», սակայն ոչ մի իշխան չի համաձայնել այդ պայմանին. «Սեբորգայի ժողովուրդը անկախ պետք է ապրի», միաբերան հայտարարում են նրանք: Ըստ որոշ ականատեսների՝ երբեմն-երբեմն իտալա-սեբորգական սահմանագծին հայտնվում է Սեբորգայի իշխանն անձամբ... որպեսզի էլ ավելի մգացնի սահմանագիծ խորհրդանշող կարմիր գիծը, իսկ իտալացի սահմանապահները այդ ամենին հետեւում են պարզապես լուռ: «Մենք անկախ պետություն ենք եւ կստիպենք աշխարհին ընդունել այդ փաստը», դեռեւս 1963-ին, ստանձնելով Սեբորգայի ղեկավարի պաշտոնը, հայտարարեց Ջորջիո 1-ինը: Կարծես թե նրա հաջորդները ամբողջովին համաձայն են նրա հետ:




### Ուզո՞ւմ եք դառնալ ասպետ, խնդրեմ, վճարեք 50 հազար եվրո

Դեպի ծով ելք չունեցող, ընդամենը 14 քառակուսի կիլոմետր տարածքով Սեբորգան, որի իշխանը, երբ զբոսնում է քաղաքի հրապարակով, ասում են, թե «իշխանը շրջում է երկրով», ապրում է հիմնականում ծաղիկներ եւ նամականիշներ, գինի եւ պանիր վաճառելով եւ, անշուշտ, զբոսաշրջության շնորհիվ: Վերջինիս առումով Սեբորգան անգամ հատկացումներ է ստանում Եվրոմիության հանձնաժողովից, որտեղ ունի առանձին ներկայացուցիչ՝ ի դեպ: Հինավուրց ամրոցների, շինությունների պահպանումը ազգային նշանակություն ունեցող խնդիրներ են իշխանությունում, քանի որ բոլորն են հասկանում, որ, ասենք, նյույորքցին չի գալիս Սեբորգա՝ երկնաքեր տեսնելու: Ղեկավարության վարած ճիշտ քաղաքականության շնորհիվ այսօր արդեն Սեբորգայում մի շարք օտարերկրացի ներդնողներ կան. որոշ հյուրանոցների, ռեստորանների, հանգստի գոտիների նախնական կապիտալը՝ հենց դրսից է: Բացի սրանից՝ Սեբորգայում մշակվել է շատ հետաքրքական մի գովազդային արշավ: Ինչպես վերը նշել ենք, Սեբորգայի քաղաքացիներ են 326 հոգի, նրանք բոլորն ունեն Սեբորգայի պետական կնիքով անձնագրեր: Սակայն օտարերկրացին, մուծելով 2 եվրո, կարող է ստանալ Սեբորգայի «ժամանակավոր քաղաքացու անձնագիր», որն ուժի մեջ է մինչեւ մեկ տարին: Իսկ եթե ցանկացող կա դառնալու Սեբորգայի իսկական քաղաքացի, այսինքն՝ ասպետ, որն, ի դեպ, որեւէ հարկ չի մուծում իտալական պետությանը, ապա դրա համար օտարերկրացին պարտավոր է 50 հազար եվրո մուծել իշխանության գանձարան: Ամեն տարի Սեբորգայի իշխանի պալատում տեղի է ունենում հատուկ արարողություն, որի ընթացքում «ամենաարժանավորները» օծվում են ասպետ՝ Մալթայի շքանշանակիր: Սեբորգայում կարելի է նաեւ գնել «ժամանակավոր անձնագիր»՝ անձամբ իշխանի ստորագրությամբ: Իշխանության արտգործնախարար, ռեստորանատեր, իտալական խորհրդարանի փոխնախագահի պաշտոնը հանուն Սեբորգայի անկախության պայքարի թողած Վալտեր Ֆերրարին հպարտանում է, որ այսօր Սեբորգան հիանալի հարաբերություններ ունի Վատիկանի ու Շվեյցարիայի հետ. «Մենք արդեն լիարժեք պետություն ենք, մեզ անգամ ճանաչել է Սան Մարինոն, մենք ներկայացուցիչ ունենք ԵՄ-ի հանձնաժողովում, ունենք պետականության բոլոր ինստիտուտները», ասում է նա՝ հավելելով. «Եթե Իտալիայում մեզ հանցագործ համարեին, ապա վաղուց կձերբակալեին ու կդատապարտեին»:

Դժվար է ասել, թե ո՞ւր կտանի անկախության ճանապարհը «ասպետների երկրին», առավել դժվար է պատասխանել հարցին, թե երբեւէ Իլհամ Ալիեւը ցանկություն կունենա՞, վճարելով 50 հազար եվրո, օծվել Սեբորգայի ասպետ, սակայն շատ ավելի հեշտ է լուծում գտնել այն հակամարտություններին, որոնք ընթացել են առանց պատերազմների: Քանի որ վերջինիս հետեւանքով առաջացած սպիները զգալիորեն դանդաղեցնում են այդ ընթացքը: Բայց, միեւնույն ժամանակ, գաղտնիք չէ, որ պատերազմով ձեռք բերված բնիկ, ազգային հողը երբեք ինքնակամ հետ չի վերադարձվում:

### Որպես վերջաբան

Սեբորգան սահմանադրական միապետություն է, պետական լեզուները՝ իտալերեն, լիգուրերեն, ֆրանսերեն, խորհրդարանը կազմված է 22 «ազնվականներից», որոնց ընտրում է իշխանը Սեբորգայի քաղաքացիներից: Դրամական միավորը լուիջանոն է: Նյու Յորքի բորսաներում մեկ լուիջանոյի համար վճարում են 6 դոլար:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

ՄՐՑՈՒՅԹՆ ԱՄՓՈՓՎԵՑ

## Հիշողության արցունքի լապտերներ

### *Ցեղասպանության զոհերի Ժնեւի հուշարձանի բացումը 2013-ի ապրիլին*

Ֆրանսիացի արվեստագետ Մելիք Օհանյանը հաղթող է ճանաչվել Ժնեւի Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանի համար հայտարարված միջազգային մրցույթում: Շվեյցարական լրատվամիջոցները, մասնավորապես «Նոյե ցյուրխեր ցայթունգը» տեղեկացնում են, թե երեքշաբթի՝ մարտի 29-ին նրա «Հիշողության լապտերներ» անվանյալ նախագիծը ներկայացվել է որպես հաղթող: Շվեյցարիայում Հայաստանի դեսպան, մեծանուն երգիչ Շառլ Ազնավուրն էլ ներկա է եղել: Օհանյանի համար ներշնչանքի աղբյուր են հանդիսացել 1920 եւ 1930-ականների Փարիզի եւ Նյու Յորքի փողոցային լապտերները, որոնք նա «զարգացրել» է՝ 9 նոր տարբեր մոդելներ ստեղծելով: Փողոցային լապտերների սյուների վրա Հայոց ցեղասպանության վերաբերյալ ֆրանսերեն եւ հայերեն տեքստեր պիտի լինեն, լապտերներն էլ արցունքի ձեւ ունեն, պատրաստվելու են պողպատից:

Ժնեւի քաղաքային խորհրդարանը հուշարձանի մասին որոշում է կայացրել 2008-ի մայիսին: Նախատեսված է, որ Ժնեւի հին քաղաքում տեղադրվելիք հուշարձանի հանդիսավոր բացումը լինելու է 2013-ի ապրիլին: «Այն ոչ միայն Հայոց ցեղասպանության, այլեւ բոլոր ցեղասպանությունների հիշատակումն է ամփոփելու, ընդգծել է Ազնավուրը, այս ստեղծագործությունը ոչ մի դեպքում չպետք է դիտարկել որպես մի երկրի դատապարտում»:

Այնուհետեւ թերթը հիշեցնում է Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում Թուրքիայի հակադարձ կոշտ քայլերը, որ պաշտոնական Բեռնն էլ զգացել է ժամանակին, երբ 2003-ին Ժնեւի, Վաադտի կանտոնները, նաեւ Ազգային խորհուրդը ճանաչել են 1915-ի ոճիրը ցեղասպանություն բառեզրով, Թուրքիան Քալմի-Ռեյի նախատեսված այցը չեղյալ է հայտարարել: «Նոյե ցյուրխեր ցայթունգը» հիշեցնում է նաեւ, թե Շվեյցարայի դիվանագիտությունը միջազգային գովեստի է արժանացել, քանի որ 2009-ին Ցյուրիխում միջնորդ հանդիսացավ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ հարաբերությունները բնականոն դարձնելուն միտված արձանագրությունների ստորագրմանը:

Թերթը գրում է նաեւ, թե միանգամայն պատահական է, որ հուշարձանը ներկայացվել է դաշնային նախագահ Միշելին Քալմի-Ռեյի Հայաստան պաշտոնական այցից մեկ օր առաջ ընդամենը:

Ինչ վերաբերում է մրցույթը շահած Մելիք Օհանյանին, ապա տեղեկացնենք, որ 1969-ին Լիոնում ծնված ու Փարիզում ապրող եւ ստեղծագործող արվեստագետը շատ ծանոթ անուն է՝ տարբեր տարիների իր մասնակցությունն է ունեցել հայտնի բիենալեներում, ցուցադրվել ժամանակակից արվեստի հանրահայտ սրահներում:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՀԵՓՅԱՆ
Գերմանիա

# Էրդողանի կուսակցությունից պատգամավոր են առաջադրվում նաեւ ասորի թեկնածուները

## *Հակառակ Թուրքիայում եւ Եվրոպայում գործող ասորական կազմակերպությունների հակազդեցության*

Անդրադառնալով հունիսի 12-ին նշանակված Թուրքիայի ազգային մեծ ժողովի՝ Մեջլիսի առաջիկա ընտրություններին, **«Ազգը»** նշել էր, որ պատգամավորական տեղերի առումով գլխավոր պայքարը կընթանա երկրում իշխող «Արդարություն եւ բարգավաճում», ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական, Ազգայնական շարժում եւ «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցությունների միջեւ, որոնք ձգտում են պատգամավորական ցուցակներում ունենալ հայ թեկնածուներ:

Միաժամանակ հայտնել էինք նաեւ այդ թեկնածուների անունները: Նրանք կընտրվեն, թե ոչ, ցույց կտա ժամանակը: Համենայն դեպս, Մելքոն Կարաքյոսեն եւ Հերման Պալյանն արդեն պատգամավորության թեկնածու առաջադրվելու դիմում են ներկայացրել վարչապետ Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությանը: Առաջադրվելու խնդրանքով այդ կուսակցությանն են դիմել նաեւ ասորիներ Մարկոս Ուրեքն ու Էդիփ Դաղլիօղլուն:

Ի տարբերություն հայ թեկնածուների, որոնք նախընտրում են առաջադրվել Ստամբուլից, Ուրեքը որպես առաջադրման վայր ընտրել է երբեմնի ասորաբնակ Մարդինը, իսկ Դաղլիօղլուն՝ Իսքենդերունը (նախկին Ալեքսանդրետի սանջակ), այսինքն՝ երկուսն էլ կառաջադրվեն իրենց ծննդավայրից:

Թուրքական «Զաման» թերթը, արծարծելով հայ եւ ասորի քաղաքացիների թեկնածու առաջադրվելու հարցը, մարտի 20-ի համարում տեղեկացրել էր, որ երկար տարիներ Ստամբուլում բնակվող Դաղլիօղլուն եղել է Թուրքիայի հանգուցյալ նախագահ Թուրգութ Օզալի անձնական դերձակը, իսկ Ուրեքը թեկնածությունը պաշտպանել են ասորական 17 միություններ, որոնք բարեխոսական նամակ են ուղարկել վարչապետ Էրդողանին:

Այդ ընթացքում Մարկոս Ուրեքը հաղորդագրություն է տարածել, մատնանշելով, որ իր թեկնածությունը պաշտպանում են համայն ասորիները, ասորական եկեղեցին եւ կազմակերպությունները: Ուրեքի այս հաղորդագրությանը բուռն հակազդեցությամբ արձագանքել են ասորիները, Թուրքիայում եւ նրա սահմաններից դուրս, մասնավորապես Շվեդիայում, Գերմանիայում, Շվեյցարիայում եւ Ավստրիայում գործող ասորական կազմակերպությունները, որոնց պատասխան հաղորդագրությունը մարտի 28-ին հրապարակեց պոլսահայ «Հայթերթ» կայքէջը:

Պատասխան հաղորդագրության մեջ, որի տակ ստորագրել են ասորական 15 կազմակերպություններ, նշվում է, որ Ուրեքի թեկնածությունը ո՛չ ասորիներն են պաշտպանում, ո՛չ ասորական եկեղեցու առաջնորդները, ո՛չ էլ Թուրքիայում եւ Եվրոպայում գործող ասորական կազմակերպությունները, հետեւաբար նրա հաղորդագրությունը որեւէ առնչություն չունի իրականության հետ:

Ըստ պատասխան հաղորդագրության, «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունից պատգամավորության թեկնածու առաջադրվելու Ուրեքի նախաձեռնությունն անձնական է, ավելին՝ Թուրքիայում ասորիները երբեւէ այսքան վատթարագույն վիճակում չեն հայտնվել, որքան այս կուսակցության իշխանության օրոք, այդ իսկ պատճառով էլ իրենք ոչ միայն չեն պաշտպանում Ուրեքի թեկնածությունը, այլեւ ճիշտ չեն համարում նաեւ առաջադրվելը:

Հաղորդագրության մեջ միաժամանակ շարադրվել են այն հալածանքները, որոնց թիրախն են դարձել ասորիները Թուրքիայում եւ մասնանշվել է դրանց նկատմամբ վարչապետ Էրդողանի կուսակցության ցուցաբերած անտարբերությունը:

Ներկայումս Թուրքիայում ասորիների թիվը 8-10 հազար է, իսկ թուրքահայերինը՝ մոտ 60 հազար: Շուրջ 75-միլիոնանոց երկրում երկու համայնքներն էլ լինելով չափազանց փոքրաթիվ, քվեների առումով որեւէ առավելություն ընտրություններում ապահովել չեն կարող ոչ մի կուսակցությանը: Հետեւաբար այս կամ այն կուսակցության ցուցակներից հայ եւ ասորի քաղաքացիների առաջադրումը յուրատեսակ ազդանշան է ուղղված ոչ այնքան համապատասխան համայնքներին, որքան միջազգային հանրությանը, այինքն՝ արեւմտյան մեծ տերություններին:

Քանի որ վերջին տարիներին Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի ծավալմանը զուգընթաց հնչում են նաեւ ասորիների ցեղասպանությունը նույնպես ճանաչելու կարծիքներ, որոնք Շվեդիայի գլխավորությամբ հետզհետե միջազգայնացվում են, ուստի եւ չի բացառվում, որ ընտրվելու դեպքում Մեջլիսի հայ եւ ասորի պատգամավորները հարկադրված լինեն ծառայել թուրքական ժխտողականության նպատակներին:

Բայց եւ այնպես, 1960-ի մայիսի 27-ի պետական հեղաշրջումից հետո թուրքական խորհրդարանը չի ունեցել գեթ մեկ թուրքահայ պատգամավոր: Այդ առումով վարչապետ Էրդողանի իսլամամետ «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը 50-ամյա ընդմիջումից հետո խորհրդարան մտնելու բացառիկ առիթ է ընձեռում հայ եւ ասորի թեկնածուներին: Այս առիթը «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության քուրդ պատգամավորներն առավելագույնս օգտագործում են, ընդ որում՝ մեծ արդյունավետությամբ: Այդպիսի արդյունավետություն ակնկալել հայ եւ ասորի պատգամավորներից, իհարկե, անիմաստ լավատեսություն է, որովհետեւ Թուրքիայում քրդեր ոչ թե մեկ կամ մի քանի տասնյակ են, այլեւ բնակչության առնվազն 1/4-ն են կազմում: Բայց որ ցանկության դեպքում նրանք կարող են համայնքին հուզող խնդիրները գոնե խորհրդարանում բարձրացնել, կարծում ենք, միանգամայն հնարավոր է:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

ՔԱԴԴԱՖԻՆ ԴԻՄԱԴՐՈՒՄ Է

# Կառավարական զորքերի հակահարձակում Լիբիայում

## *Չի բացառվում, որ ապստամբները ամերիկյան զենք ստանան*

**Լիբիայում Մուամմար Քադդաֆիին հավատարիմ մնացած կառավարական զորքերը մարտի 29-ին սկսած հակահարձակման ընթացքում ապստամբներին հետ են մղել 160 կմ դեպի արեւելք: Ապստամբների դիրքերը վերջին երկու օրերին գնդակոծվել են տանկերից եւ ռեակտիվ հրետանային մարտկոցներից: «Լոս Անջելես թայմս» թերթի տվյալներով, կառավարական զորքերը տեղ-տեղ 110 կմ առաջ են շարժվել ընդամենը 4 ժամում:**




**Քադդաֆիի բանակի հակահարձակումը ի չիք է դարձրել ապստամբների ջանքերը, որոնք անցյալ շաբաթավերջին կարողացել էին շարժվել 240 կմ դեպի արեւմուտք՝ օգտվելով միջազգային կոալիցիայի օդուժի եւ ծովուժի հարվածներից:**

**Երեկ առավոտյան ապստամբները կորցրել էին մի քանի խոշոր քաղաք՝ Ռաս-Լանուֆ, Սերտ, Բին-Ջավադ եւ այլն: Քադդաֆիի ուժերի հաջողությունը բացատրում են նրանով, որ երեքշաբթի օրը ՆԱՏՕ-ի ռազմօդանավերը չռմբակոծեցին կառավարական զորքերի դիրքերն ու շարասյուները: Ավելի վաղ հաղորդվել էր, թե այդ զորքերը հրաժարվել են հետտությամբ թիրախ դարձող ծանր տեխնիկայից եւ սկսել են տեղաշարժվել ջիպերով, ինչպես ապստամբները:**

**Պենտագոնի ներկայացուցիչներին վկայակոչելով՝ CBS հեռուստաալիքը հաղորդում է, որ ամերիկյան ծովուժը երեքշաբթի օրը 22 «Թոմահավկ» հրթիռ է արձակել Տրիպոլիի շրջանում գտնվող զինապահեստների եւ այլ ռազմական օբյեկտների վրա:**

**Ամերիկյան առաջատար հեռուստաալիքներին տված հարցազրույցում նախագահ Բարաք Օբաման չի բացառել, որ լիբիացի ապստամբները կարող են ամերիկյան զենք ստանալ: Մասնավորապես ABC-ն հաղորդում է, որ ընդդիմության մարտական ջոկատներին ամերիկյան զենք մատակարարելու հարցը «դեռ չի քննարկվել», բայց այդ ջոկատները շուտով կստանան կապի միջոցներ, բուժսարքավորումներ, գուցեեւ փոխադրամիջոցներ:**

**Մարտի 29-ի դրությամբ Լիբիայում ԱՄՆ ռազմական գործողությունների վրա արդեն ծախսվել էր 550 մլն դոլար, հաղորդում է Ֆրանսպրեսը: Ըստ Պենտագոնի, ծախսերի մոտ 60 տոկոսը կազմել են թեւավոր հրթիռների արձակումները եւ ռմբակոծությունները: Մնացած փողերը ծախսվել են զորքերի վերաբաշխման եւ ծովուժի ու օդուժի վառելիքի վրա:**

# Բան Կի Մուն. «Երուսաղեմը պետք է դառնա երկու երկրի մայրաքաղաք»



**Ուրուգվայի մայրաքաղաք Մոնտեվիդեոյում անցկացվում է ՄԱԿ-ի տարածաշրջանային կոնֆերանս ի պաշտպանություն պաղեստինա-իսրայելական բանակցությունների: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունը հանդիպման մասնակիցներին հղած ուղերձում խստիվ դատապարտել է Իսրայելի կառավարության քաղաքականությունը: Այդ մասին հաղորդում է newsru.co.il կայքը:**

**«1967-ին սկսված օկուպացիան անթույլատրելի է ինչպես բարոյաէթիկական, այնպես էլ քաղաքական նկատառումներով: Ժամանակն է վերջ դնելու դրան: Պաղեստինցիներն ունեն կենսունակ պետության իրավունք: Երուսաղեմը պետք է դառնա երկու երկրի մայրաքաղաք, իսկ փախստականների խնդիրը պահանջում է արդարացի լուծում», գրել է Բան Կի Մունը:**

**Ընդունելով Իսրայելի խաղաղության եւ անվտանգության իրավունքը, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը այդ երկրին փաստորեն մեղադրել է հաշտության բանակցությունների ձախողման մեջ: Նրա խոսքերով, վերաբնակեցման քայլերը հակասում են միջազգային իրավունքին ու «Ճանապարհային քարտեզ» ծրագրին: Արեւելյան Երուսաղեմում տներ քանդելը քաղաքի պաղեստինցի բնակիչների տեղափոխման քաղաքականության դրսեւորում է:**

**Բան Կի Մունը բարձր է գնահատել Պաղեստինի ապագա պետական կառույցների ստեղծմանն ուղղված գործողությունները եւ ՄԱԿ-ի անունից խոստացել է հնարավոր ամեն ինչ անել ներպաղեստինյան բանակցությունների հաջողության համար:**

# Ձերբակալվել է Նյու Յորքի ամենավտանգավոր հանցագործներից մեկը՝ Մարաս Միխայլիչը

Նյու Յորքում ձերբակալվել է նախկին ուկրաինացի Մարաս Միխայլիչը, որը ամենավտանգավոր հանցագործներից մեկն է համարվում բանկերի մի շարք կողոպուտների պատճառով: Այդ մասին հաղորդվում է ՀԴԲ նյույորքյան ստորաբաժանման մամլո տեղեկագրում:

ՀԴԲ-ի գործակալները 35-ամյա Միխայլիչին ձերբակալել են մարտի 29-ին, Քվինսի շրջանում: Ձերբակալության պահին կողոպտիչը չի դիմադրել:

«Նյու Յորք թայմսը» գրում է, որ հանցագործը բռնվել է սեփական սխալի պատճառով: Երկուշաբթի օրը նա կողոպտել էր հերթական բանկը՝ Էդիսոնում (Նյու Ջերսիի նահանգ) գտնվող Cathay Bank-ը: Դրանից հետո նա տաքսի էր կանչել, սակայն կանչով եկած վարորդը, նրա ատրճանակը տեսնելով, մեքենան թողած փախել էր: Միխայլիչը ինքն էր նստել ղեկի մոտ եւ սլացել անհայտ



ուղղությամբ: Դիտարկման քաղաքային տեսախցիկները շուտով ավտոմեքենան նկարել էին Քվինսում, որտեղ էլ ավելի ուշ ձերբակալվել էր Միխայլիչը:

Մարաս Միխայլիչը իրավապահների տեսադաշտում հայտնվեց 2011-ի փետրվարին: Անցյալ դեկտեմբերից մինչեւ օրս նա բանկերում 9 զինված կողոպուտ է իրականացրել: Սկզբում նա գործում էր միայն Նյու Յորքում, բայց հետո գործունեություն ծավալեց նաեւ հարեւան Նյու Ջերսիում: Նրա վարքագիծը լայնորեն լուսաբանվում էր ամերիկյան մամուլում: Հաղորդվում էր, որ Միխայլիչի բոլոր կողոպուտներն իրականացվում են միեւնույն սցենարով. նա մտնում էր գանձարկղին, հանում ատրճանակը եւ փող պահանջում: Կողոպուտներից մեկի ժամանակ հանցագործին հաջողվել էր թաքնվել ոստիկանական ուղղաթիռից:

Փետրվարի կեսերից Միխայլիչի անունը ՀԴԲ-ի կազմած ամենավտանգավոր հանցագործների ցանկում է: Ամերիկացիներին նախազգուշացնում էին, որ նա զինված է եւ շատ վտանգավոր: Քննիչների տվյալների համաձայն, Միխայլիչը հերոինային թմրամոլ է: Կողոպուտներից ստացված փողերն անհրաժեշտ էին առաջին հերթին նրա թմրադեղային կախվածության բավարարման համար:

# Մշակույթ

## Քոչարի տարածական նկարչության նմուշներից

Երվանդ Քոչարի տարածական նկարչությունը շատերին է զարմացրել: 1928 թվականին առաջին անգամ Փարիզի «Van Leer» պատկերասրահում բացվում է «Քոչարի տարածական նկարչությունը» ցուցահանդեսը՝ 15 ստեղծագործություններով:

Ինչպես նշում է Քոչարի թանգարանի տնօրեն **Լալա Մարտիրոսյան-Քոչարը**, «նույնիսկ շատ բան տեսած Փարիզի համար այդ նկարներն արժանացան ծայրահեղ գնահատականների: Քոչարի տարածական նկարչությունն արդի արվեստի բարձրագույն նվաճումներից է... Այն մոդայիկ արտահայտչամիջոց չէ, այլ ինքնուրույն արվեստ, որն ունի իր լեզուն եւ շարունակությունը: Տարածական նկարչությունը խախտեց արձանագործության եւ հարթանկարչության շրջանակը, բարեփոխեց տեսողական օրենքները, մի երրորդ ուղի բացելով նկարիչների ու քանդակագործների առջեւ»:



Եվ ահա, հուրախություն մեզ, «Բարձր արվեստ» կերպարվեստի կենտրոնը Հայաստան է բերել Փարիզի (Ֆրանսիա) «Մինոտավր» պատկերասրահի ֆոնդում գրանցված Երվանդ Քոչարի «Տարածական» (47x67x33 սմ) 1927-ին երկաթի վրա արված նկարը: Ինչպես **«Ազգին»** տեղեկացրին «Բարձր արվեստ» կերպարվեստի կենտրոնի հիմնադիր **Արմինե Քոչարյանն** ու տնօրեն **Գայանե Թումանյանը**, շուրջ մեկուկես տարի բանակցել են Փարիզի «Մինոտավր» պատկերասրահի տնօրեն Բենուա Շապիրոյի հետ՝ Քոչարի այդ աշխատանքը Երեւանում ցուցադրելու համար: Պարզվել է, որ Շապիրոն Քոչարի այդ աշխատանքը 2005-ին գնել է Պատրիս Տրիգանոյից: Ռուսական կոլեկցիոները Քոչարի այդ գործը շուրջ 30 տարի իր հավաքածուների շարքում լավագույն տեղն է հատկացրել: Աշխատանքն առաջին անգամ կցուցադրվի Ազգային պատկերասրահում ապրիլի 5-ից մինչեւ մայիսի 5-ը՝ ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ:

Տկն Թումանյանը նաեւ ավելացրեց, որ Երվանդ Քոչարի այդ հազվագյուտ աշխատանքը Հայաստանում իր մշտական տեղը գտնելու համար բանակցությունները դեռ շարունակվում են: Քոչարի այդ գործի կողքին կերպարվեստի կենտրոնի նախաձեռնությամբ առաջին անգամ կցուցադրվի նաեւ Ժանսեմի «Նասյուրմորտ-1955 թ.» յուղաներկ կտավը (165x150):

Երեւանի կենտրոնում 5 տարի առաջ բացված «Բարձր արվեստ» կերպարվեստի կենտրոնը դարձել է արվեստագետների անհատական հավաքածուներով հետաքրքրվող արվեստաբանների, արվեստասերների յուրօրինակ հավաքատեղի, ուր հնարավոր է լինում ժամանակ առ ժամանակ փակ դիտումներով ծանոթանալ շատ հայտնի նկարիչների, քանդակագործների աշխատանքներին: Իսկ թե ինչո՞ւ փակ՝ պատճառը տարածքի փոքրությունն է: Կենտրոնում այժմ ցուցադրված են նաեւ Ռոդենի, Դալիի երկու մանրաքանդակների պատճենները, որոնց պատճենահանման պաշտոնական թույլտվությունը հաստատվել է հեղինակների ու նրանց ժառանգների ստորագրությամբ: Աշխարհում գոյություն ունեցող Ռոդենի «VEVUSALA TOILETTE» 20 եւ Դալիի «Le Torse d'Ade'le» քանդակներից մեկական այսօր Հայաստանում են ու մաս են կազմում անհատական հավաքածուի: Առաջիկայում նախատեսվում է Թութունջյանի գրաֆիկական աշխատանքները բերել Հայաստան, տեղեկացրեց տնօրենը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

## Օրատորիա Հրանտ Դինքի հիշատակին

*Այն հնչելու է Արմին Թ. Վեգների*

*125-ամյակի միջոցառումների շրջանակներում*

Գերմանական «Վեսթդոյչե ցայթունգը» հարցազրույց է տպագրել երաժիշտ Ուլրիխ Կլանի հետ, որը ծրագրել է 2010-ին Բեռլինում հաջողություն ունեցած Արմին Թեոֆիլ Վեգներին նվիրված միջոցառումների շարքը ներկայացնել նաեւ Վուպերթալում: Մասնակցելու են գերմանացի, թուրք, քուրդ եւ հայ արվեստագետներ, զեկուցումներ են կարդալու Վեգների զարմիկն ու Հայաստանի գերմանական համալսարանի ռեկտորը, բացվելու է Կամո Թումասյան ցուցահանդեսը: Հնչելու են երգեր, որ ստեղծվել են Վեգների տեքստերի հիման վրա: Կլանը գտնում է, որ Վեգներն իբրեւ քնարերգու քիչ է ծանոթ ընթերցող լայն շրջանակներին, այդ բացը լրացնելու համար 2011-ի հոկտեմբերին գրողի, բանաստեղծի 125-ամյակի առիթով Արմին Թ. Վեգներ ընկերակցությունը հոբելյանական մի հրատարակություն է պատրաստում:

Վեգներյան օրերին առաջին անգամ հանրության դատին է հանձնվելու նաեւ Հրանտ Դինքի հիշատակին Ուլրիխ Կլանի գրած օրատորիան, որ հեղինակի ասելով, միջոցառումների գագաթնակետն է լինելու: Երգահանը պատմում է, թե Դինքի սպանությունից հետո ինքը հիշատակի մի մեծ միջոցառում է կազմակերպել իր թուրք, քուրդ, հայ ընկերների հետ: Դրանից հետո է ծնվել մշակութային եւ կրոնական սահմաններից անդին մոդեռն օրատորիա գրելու միտքը՝ համեմված Աստվածաշնչից, Թալմուդից, Ղուրանից, արեւմտյան եւ արեւելյան քնարերգությունից ընտրյալ հատվածներով:

Հրանտ Դինքի մասին ասում է, թե իրեն տպավորել է նրա հումորը, քաջությունը, անկեղծությունը՝ «իր սիրառատ խարիզմայով նա կարողանում էր վանել ատելությունը: Մահվանից հետո էլ նրա դերը չի նվազում: Ոչ միայն ես, այլեւ ուրիշներ նրա հարատեւությունը պայմանավորել են Հիսուսի, Մահաթմա Գանդիի կամ Մարտին Լյութեր Քինգի ավանդույթով»: Օրատորայի երգչախմբային հատվածներում հնչելու է գերմաներեն, թուրքերեն եւ հայերեն: Հրանտ Դինքի երկար տեքստերը ոչ թե երգվելու են, այլ ընթերցելու են պրոֆեսիոնալ դերասանները երեք՝ գերմաներեն, թուրքերեն եւ հայերեն լեզուներից մեկով, որն առավել հասկանալի կլինի ներկայացվող երկրում՝ Գերմանիայում, Թուրքիայում, Հայաստանում:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

## Վիգէն Չալդրանեան Գերմանիոյ մէջ

Շաբաթ, 26 մարտ 2011 երեկոյան, Գերմանիոյ Վիսպադէն քաղաքի Պիպրիխէր պալատի ցուցասրահին մէջ տեղի ունեցաւ հայազգի հանրածանօթ բեմադրիչ Վիգէն Չալդրանեանի «ՔՐՄՈՒՀԻՆ» գեղարուեստական ֆիլմի ցուցադրումը: «Քրմուհին» ֆիլմը բազմիցս ցուցադրուած է Հայաստանի եւ այլեւայլ երկիրներու մէջ: Ասիկա ֆիլմին առաջին ցուցադրութիւնն էր Գերմանիոյ մէջ, որ արժանացաւ հանդիսականներու արտակարգ ընդունելութեան: Հետաքրքրութիւնը ֆիլմին նկատմամբ շատ մեծ էր եւ շատեր տեղ չըլլալու պատճառով դժբախտաբար չկրցան ներկայ ըլլալ ցուցադրութեան:

Շուրջ 100 հայ եւ օտար հանդիսականներու կողքին ֆիլմի ցուցադրութեան ներկայ էին Գերմանիոյ թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Սերոպէ վրդ. Իսխանեան, Առաջնորդութեան թեմական խորհուրդի անդամ եւ «Գառուն» ամսագրի գլխաւոր խմբագիր Դոկտ. Սարգիս Ատամ, Կեդրոնական Գերմանիոյ հայ համայնքներու ներկայացուցիչներ:

Ֆիլմի հիմնական նիւթը հայոց պատմութեան հեթանոսութենէ քրիստոնէութիւն անցման շրջանն է: Բեմադրիչը կը փորձէ արկածի հետեւանքով մահափուլէն արթնցած կնոջ մը երեւակայական յիշողութեամբ վերապատմել 4-րդ դարուն հայ պատմութեան անցուդարձերը եւ անոնք ներկայացնել իւրովի մեկնաբանութեամբ: Թէեւ ֆիլմը կանդրադառնայ հայոց պատմութեան բախտորոշ ժամանակաշրջանի մը եւ կը վերարծարծէ պատմական բազմաթիւ անցքեր, այնուհանդերձ պատմական ֆիլմ մը չէ ան: Ֆիլմը իրական եւ առասպելական պատմութեան ներդաշնակ խառնուրդ մըն է, որ գեղարուեստականօրէն կը հրամցուի հանդիսատեսին:

Այս ֆիլմով Վիգէն Չալդրանեան կը փորձէ անցեալի առասպել դարձած ժամանակաշրջանը վերարթնցնել եւ այդ կարեւորագոյն անցուդարձերը վերապրեցնել ներկայի մէջ եւ ներկայ մարդուն հասկնալի ձեւով եւ երեւակայութեամբ:

**ՎԻԳԷՆ ՉԱԼԴՐԱՆԵԱՆ** ծնած է 1955 թուականին Երեւանի մէջ: Մինչ այսօր նկարած է շուրջ 19 ֆիլմեր, որոնց մեծ մասը նիւթ ունին հայոց պատմութիւնն ու մշակոյթը: «Քրմուհին» ֆիլմէն զատ յայտնի են նաեւ Չալդրանեանի «Ոսկին ծիծաղում է», «Ապրիլ», «Տէր, ողորմեա», «Լռութեան սիմֆոնիա», «Ձայն բարբառոյ» ֆիլմերը, որոնք բեմադրիչին բերած են մեծ ճանաչում: Ան արժանացած է նաեւ հայ եւ միջազգային կարգ մը մրցանակներու:

ՍԱՐԳԻՍ ԱՏԱՄ

Գերմանիա



ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՀԱՄԵՐԳԸ

## Խանդավառ մի օր Կ. Սարաջյանի անվան երաժշտական դպրոցում



**Արվեստը վերաբերմունք է աշխարհին, մտածողություն, արտահայտչակերպ. արվեստը գեղեցկություն է, ու դպրոցներն արվեստի առաջին կրթօջախներից մեկն են երիտասարդ սերնդի գեղագիտական մտքի, դրա առաջին ներարկողը, ուստի նրանց գործունեությունը եւ մանավանդ ակտիվ ու առողջ գործունեությունն առավել քան գնահատելի է:**

**Կ. Սարաջյանի երաժշտական դպրոցը, կրթական բազմամյա ավանդույթները շարունակում է այսօր էլ՝ այն հարստացնելով նոր ծրագրերով՝ մանկավարժների նոր սերնդի խանդավառ ակտիվությամբ , Արմինե Պողոսյանի ղեկավարությամբ աշխատանքային-ստեղծագործական մտերիմ մթնոլորտում: Համերգային ծրագրերը տարբերաբար ուղեկցող մասն են դպրոցական կյանքի: Նախորդ օրվա միջոցառումը, սակայն, տարբեր էր նախորդներից, եւ արտասովորությունը համերգային ծրագրի կատարողական կազմն էր՝ այս անգամ ոչ թե աշակերտներից բաղկացած, այլ՝ մանկավարժներից: Նրանք էլ դպրոցական առօրյայի երեկվա ավարտը վերածեցին իսկական տոնակատարության: Ծրագիրը մտահղացվել էր որպես շնորհավորանք-ընծա կանանց տոնական միամսյակին: Եվ դրվատելին ոչ միայն ծնողների, աշակերտների , հյուրերի, նաեւ Արաբկիրի վարչական շրջանի ղեկավար Էդուարդ Մուշեղյանի եւ աշխատակիցների մի խմբի ներկայությունն էր: Ըստ որում, համերգի ավարտին իր վերաբերմունքն առաջինը նա արտահայտեց՝ հոտնկայս ծափահարությամբ:**

**Համերգային ծրագրի մասնակիցները՝ ինչպես փորձառությամբ հմուտ մանկավարժներ, այնպես էլ՝ երիտասարդներ, ոչ միայն սաների հաջողություններով են ներկայանալի, նաեւ հենց իրենց: Նրանցից շատերը հանդես են գալիս տարբեր նվագախմբերի կազմում, մասնակցում մրցույթների եւ դափնիների արժանանում: Շուրջ 55 տարի Սարաջյանի անվան դպրոցում մանկավարժական գործունեություն է ծավալում Գեղունի Չթչյանը, որի խոսքերի ջերմությունից միայն կարելի էր պատկերացում կազմել երաժշտական այս կրթօջախի մթնոլորտի եւ մանկավարժների բարեմիտ փոխհարաբերությունների մասին: Համերգի տպավորությամբ նրանց փոխադարձ շնորհավորանքների ջերմությունը միմյանց, դարձյալ անակնկալ էր: «Դու մեր հոգու լարերին դիպար, մեզ վերադարձրիր մեր ուրախ ու տխուր պահերը», հաճելի էր լսել վոկալի դասատու Լիլիթ Բասենցյանի շնորհավորանքը իր կոլեգային՝ Աշոտ Սողոմոնյանին եւ մնացածներին՝ նույնպես:**

**Ծրագրում ընդգրկված էին երաժշտական մի շարք հայտնի ստեղծագործություններ՝ Դեբյուսի «Լուսնի լույսը», Սեն-Սանս «Հավանեզ», Պիացոլլա «Լիբերտանգո», Սայաթ-Նովա «Էշխեմեդ», Անդրե Վերչուրեն «Վալս» եւ այլն: Համերգը Ֆորեի «Էլեգիայով» բացեց մանկավարժական բազմամյա փորձառությամբ թավջութակահար Գայանե Ռաֆայելյանը. Նա ուսուցչությանը հաջողությամբ համատեղում է բեմական գործունեությունը՝ տարբեր նվագախմբերի կազմում՝ հանրապետական եւ միջազգային մրցույթների ու փառատոների մասնակցությամբ:**

**Սոնա Խաչատրյանը՝** լարային բաժնի ուսուցչուհին, Երեւանի պետկոնսերվատորիայի ուսանող է դեռ եւ որպես ջութակահար հանդես է գալիս կամերային նվագախմբերի կազմում: Նրա կատարմամբ հնչեց Սեն-Սանսի «Հավանեզը»:

Մանկավարժական կարողությունները լավագույնս է դրսեւորում նաեւ ֆլեյտահարուհի **Քրիստինա Ավագյանը**, նրա սաները համերգային միջոցառումների հարուստ փորձ եւ հաջողություններ են արձանագրում: Նրա կատարմամբ հնչեց Դեբյուսիի «Լուսնի լույսը»:

Տպավորիչ էր քանոնի դասարանի դասատու **Անուշ Կիրակոսյանի՝** Սայաթ-Նովայի «Էշխեմեդի» մեկնաբանությունը: Նա նաեւ դասավանդում է Երեւանի կոնսերվատորիայում, հեղինակ է մի շարք դասագրքերի: Միաժամանակ ստեղծագործական կյանքով է ապրում, մենահամերգներ ունենում ոչ միայն Հայաստանում, նաեւ՝ դրսում: 2000-ին նրա թողարկած ձայնասկավառակը ԱՄՆ-ի «World Music» փառատոնին արժանացավ առաջին մրցանակի:

Նմանապես ունկնդրության հաճելի պահեր պարգեւեցին կիթառահարներ **Ժորա Սարգսյանը** (Վիլլա Լոբոս, «2 կոնցերտային էտյուդ») եւ **Վարդան Շահինյանը** («Տանգո-Ֆլամենկո»):

Հանդիսականի ջերմ վերաբերմունքին արժանացան ակորդեոնահար **Աշոտ Սողոմոնյանի** (Անդրե Վերչուրեն, «Style Musette» valse) եւ սաքսաֆոնահար **Գոռ Ղասաբյանի** (Միյո, «Բրազիլիերա», Կոսմա, «Թափված տերեւներ») տպավորիչ կատարումները: Գոռը՝ դպրոցի նախկին սաներից, օժտված եւ խոստումնալից՝ հետագայում մասնագիտական կրթությունը կատարելագործած, հանրապետական եւ միջազգային մրցույթներում հաջողությունների արժանացած, վերադառնալով հարազատ դպրոց, այժմ տաղանդավոր երաժշտի իր փորձն է փոխանցում սաներին: Մի շարք գործիքների տիրապետող շնորհաշատ մանկավարժ, բնույթով ակտիվ ու բազմաթիվ նախաձեռնությունների հեղինակ Աշոտ Սողոմոնյանը դպրոցի ակորդեոնի դասարանի հիմնադիրն է: Միաժամանակ **«Ազգ»** օրաթերթի աշխատակիցը նույնկերպ դրսեւորվում է նաեւ այստեղ. մարդկային եւ աշխատանքային նույն տրտացավ ու ակտիվ վերաբերմունքը, մոտեցումը:

Համերգի անակնկալը եզրափակիչ համարի՝ մասնակից մանկավարժների անսամբլային գեղեցիկ մատուցումն էր՝ դպրոցի երգչախմբի կոնցերտմայստեր **Թամարա Պողոսովայի** դաշնամուրային նվագակցությամբ. հնչեց Պիացոլլայի «Լիբերտանգոն»՝ մեղեդու ռիթմերով ողողելով դահլիճը: Հաճելի էր հանդիսավարի՝ դաշնամուրի դասատու **Ռուզաննա Մելիքսեթյանի** մատուցման կիրթ անմիջականությունը:

Համերգային պաշտոնական մասին հաջորդող ինքնաբուխ համերգը հյուրասիրության սենյակում, ամենատպավորիչն էր, մասնակիցների անկեղծությունն ու անմիջականությունը հիրավի գարնանային օրվա բաց տրամադրության հրաշալի շարունակություն ու ձայնակցում էր. վարակիչ ուրախություն ու գնահատելի փոխըմբռնում:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

# «Միկան» փրկեց խաղը

## *Եզրափակիչի ուղեգրի բախտը կվճռվի պատասխան խաղում*

Երեկ կայացավ ֆուտբոլի ՀՀ գավաթի խաղարկության կիսաեզրափակիչ առաջին հանդիպումը, որում «Միկան» սեփական հարկի տակ հյուրընկալել էր «Բանանցին»: Վերջին 5 տարիներին մրցակիցները մշտապես հանդիպում են կիսաեզրափակիչում: Նախորդ 4 խաղարկություններում մշտապես հաջողությունն ուղեկցել է «Բանանցին»:




Առաջին խաղակեսի ավարտից հետո թվում էր, թե «Բանանցն» այս անգամ էլ կփակի եզրափակիչի ճանապարհը «Միկայի» առջեւ, քանի որ հաղթում էր 3-1 հաշվով: Դրանում առաջին հերթին մեղավոր էին «Միկայի» պաշտպանները: 17-րդ րոպեին պարզ իրադրությունում Արմեն Պետրոսյանը գնդակը փոխանցեց մրցակցի հարձակվող Բրունո Կորեային, որն անարգել ներխուժեց տուգանային հրապարակ ու գրավեց Գեւորգ Կասպարովի դարպասը: Բաց թողած գոլը մի տեսակ ընկճեց դաշտի տերերին, որոնք կրկին անփույթ խաղացին պաշտպանությունում եւ այս անգամ արդեն Վալտեր Պողոսյանը կրկնապատկեց հաշիվը:

«Միկային» հաջողվեց պատասխան գոլը խփել: Այս անգամ արդեն «Բանանցը» պաշտպանությունում սխալ թույլ տվեց ու Նարեկ Բեգլարյանը մոտ տարածությունից գլխի հարվածով գրավեց Կոնստանտին Օդոլսկու պաշտպանած դարպասը, որն այս խաղում նորամուտը նշեց թիմում: Առաջին խաղակեսի ավարտին անկյունայինի խաղարկումից հետո Արարատ Առաքելյանը գլխի հարվածով 3-րդ գոլը խփեց:

Թվում էր, թե գավաթային հանդիպման ելքը վճռված է: Սակայն ընդմիջումից հետո խաղի պատկերը կտրուկ փոխվեց: «Բանանցը» ողջ կազմով նահանջել էր սեփական կիսադաշտ՝ հնարավորություն ընձեռելով «Միկային» մեծ ուժերով հարձակվել: Եվ դաշտի տերերը հիանալի օգտագործեցին խաղը փրկելու ընձեռված հնարավորությունը: 52-րդ րոպեին փոխարինման մտած չինացի Դոնգ Ֆանգժուն կրճատեց հաշվի տարբերությունը, իսկ ավելացված ժամանակում Նարեկ Բեգլարյանը խառը իրադրությունից «Միկային» փրկեց պարտությունից:

Այսպիսով, գավաթային առաջին խաղում գրանցվեց մարտական ոչ-ոքի՝ 3-3: Պատասխան խաղը կկայանա ապրիլի 20-ին, «Բանանցի» մարզադաշտում:

Խաղից հետո կայացած մամուլի ասուլիսում թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն արտահայտեցին:

**Ստեւիցա Կուզմանովսկի** («Բանանց»)-Առաջին խաղակեսում լավ խաղացինք, տակտիկապես գրագետ գործեցինք ու կարող էինք վճռել մրցակցության ելքը: Սակայն պաշտպանությունը հստակ չգործեց, 2-րդ խաղակեսում վատ խաղացինք ու ձեռքից բաց թողեցինք հաղթանակը: Այժմ պետք է նախապատրաստվենք պատասխան խաղին, որում էլ կվճռվի եզրափակիչի ուղեգրի բախտը: Այսօր դարպասի պաշտպանությունը վստահել էինք Կոնստանտին Օդոլսկուն, քանի որ Ստեփան Ղազարյանը հոգեբանորեն պատրաստ չէր խաղին: Սամվել Մելքոնյանի գործողություններից դժգոհ էինք, ուստի այսօրվա խաղում կազմում չէինք ընդգրկել: Բետոն վնասվածքից դեռեւս լրիվ չի ապաքինվել, ուստի փոխարինման է դուրս գալիս: Հույս ունեմ, որ մեկ ամսից Դուբալան շարք կվերադառնա:

**Արմեն Շահգելդյան** («Միկա»)-Դիտարժան ու գոլառատ խաղ ստացվեց: Առաջին խաղակեսում մեր սխալների պատճառով հայտնվեցինք պարտվողի դերում: Ընդմիջմանը տղաներին ասացի, որ հարկավոր է մոռանալ թույլ տված սխալները, պետք չէ շտապել, կամային հատկանիշներ է անհրաժեշտ դրսեւորել: Օրինակ բերեցի Հոլանդիա-Հունգարիա խաղը: Ի պատիվ մեր տղաների, կարողացան փրկել խաղը: Եզրափակիչ մտնելու թիմերի հնարավորությունները հավասար եմ գնահատում, թեեւ «Բանանցը» մրցակցի դաշտում 3 գոլ է խփել ու պատասխան խաղն էլ սեփական հարկի տակ է անցկացնելու: Ցավոք, այսօր էլ վնասվածքներ ստացան Կոնստանտին Մանդրիչենկոն ու Անդրանիկ Ոսկանյանը՝ միանալով Վահագն Մինասյանին ու Արամ Ոսկանյանին, որոնց դեռեւս ժամանակ է պետք լրիվ ապաքինվելու համար:

# Աշխարհի փոխչեմպիոններն արդյունավետ խաղ են ցուցադրում



Ֆուտբոլի Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարում կայացան հերթական հանդիպումները: A խմբում 2-րդ տեղի համար պայքարող Թուրքիայի հավաքականը Գուս Հիդինգի գլխավորությամբ սեփական հարկի տակ 2-0 հաշվով առավելության հասավ ավստրիացիների նկատմամբ: 5 խաղից հետո թուրքերը վաստակած 9 միավորով ընթանում են 3-րդ տեղում: 2-րդ հորիզոնականում 10 միավորով Բելգիայի հավաքականն է, որը սեփական հարկի տակ 4-1 հաշվով ջախջախեց ադրբեջանցիներին: Իսկ խմբի առաջատարը Գերմանիայի ընտրանին է, որը հաղթել է բոլոր 5 խաղերում էլ ու գործնականում ապահովել է ուղեգիրը:

C խմբում կայացած 2 խաղերում էլ գրանցվեց ոչ-ոքի: Եթե Էստոնիայի եւ Սերբիայի հավաքականները մեկական գնդակ փոխանակեցին, ապա Հս. Իռլանդիայի եւ Սլովենիայի ընտրանիների մրցավեճում դարպասները մնացին անառիկ: Այստեղ առաջատարը 13 միավոր վաստակած իտալացիներն են: Սլովենիայի եւ Սերբիայի հավաքականներն ունեն 8-ական միավոր, սակայն մեկ խաղ ավելի են անցկացրել իտալացիներից:

D խմբում կայացավ մեկ հանդիպում: Ռումինիայի հավաքականը սեփական դաշտում 3-1 հաշվով հաղթեց Լյուքսեմբուրգին: Ռումինացիների կազմում աչքի ընկավ Ադրիան Մուտուն՝ խփելով 2 գնդակ: Ընտրական մրցաշարում ռումինացիներն անդրանիկ հաղթանակը տոնեցին եւ 5 միավորով նախավերջին՝ 5-րդ տեղում են:

Իրենց տպավորիչ ելույթներն են շարունակում աշխարհի փոխչեմպիոն հոլանդացիները, որոնք կրկին աչքի ընկան արդյունավետ խաղով: Ընդամենը 3 օր առաջ նրանք Բուդապեշտում 4-0 հաշվով ջախջախել էին հունգարացիներին: Եվ ահա սեփական հարկի տակ նույն մրցակցի դարպասը 5 գոլ խփեցին: Սակայն այս անգամ հունգարացիներն էլ պարտքի տակ չմնացին եւ 3 անգամ գրավեցին դաշտի տերերի դարպասը: Ընդ որում 2-րդ խաղակեսի սկզբում հունգարացիներն առջեւում էին 2-1 հաշվով: Հետագայում Սնեյդերն ու Ռուդ վան Նիստելռոյը հոլանդացիներին առաջ մղեցին (3-2), բայց Գերան 2 րոպե անց վերականգնեց հավասարակշռությունը: Հոլանդացիների հաղթանակն ապահովեց Կեյտը՝ խաղավերջում 2 անգամ խոցելով հյուրերի դարպասը:

Հոլանդիայի հավաքականը 6-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց՝ 6 խաղում մրցակիցների դարպասը խփելով 21 գնդակ: Կարելի է վստահորեն փաստել, որ E խմբում 1-ին տեղի հարցը վճռված է: 9-ական միավոր ունեն հունգարացիներն ու շվեդները: Վերջիններս, որ 2 խաղ պակաս են անցկացրել, 2-1 հաշվով հաղթեցին մոլդովացիներին:

F խմբում կայացած միակ խաղում Իսրայելի հավաքականը սեփական հարկի տակ 1-0 հաշվով հաղթեց վրացիներին: I խմբում հաղթարշավը շարունակեց Իսպանիայի հավաքականը՝ Լիտվայում տանտերերին պարտության մատնելով 3-1 հաշվով: Իսպանացիները 5-րդ անընդմեջ հաղթանակը տոնեցին: 9 միավորով 2-րդ տեղում ընթացող չեխերը 2 անպատասխան գնդակ ուղարկեցին Լիխտենշտեյնի հավաքականի դարպասը:



# Առաջին մեդալը Հայաստանին պարգեւեց Մուսա Մուրթազալիեւը

**Գերմանիայի Դորտմունդ քաղաքում մեկնարկել է ըմբշամարտի Եվրոպայի հերթական առաջնությունը: Առաջինը մրցապարտեզ դուրս եկան ազատ ոճային ըմբիշները: Մրցումների առաջին օրը մեդալները խաղարկվեցին քաշային 3 կարգերում:**

**Հայաստանի պատվիրակների համար մեկնարկը կարելի է հաջող համարել: Մինչեւ 74 կգ քաշային Մուսա Մուրթազալիեւը հասավ մինչեւ եզրափակիչ ու արժանացավ արծաթե մեդալի: Առաջին գոտեմարտում Հայաստանի հավաքականի անդամը բացահայտ առավելության հասավ իսպանացի Ալբերտո Նավարոյի նկատմամբ (10-0): Նրա հաջորդ մրցակիցը բուլղարացի Կիրիլ Թերզիեւն էր, որի նկատմամբ Մուրթազալիեւն առավելության հասավ 4-1 հաշվով: Կիսաեզրափակիչում բավական դժվարին պայքարում Մուրթազալիեւը 2-1 հաշվով պարտության մատնեց վրացի ըմբիշ Դավիթ Խուցիշվիլուն: Եզրափակիչում Մուրթազալիեւը գոտեմարտեց ռուսաստանցի աշխարհի կրկնակի չեմպիոն Դենիս Ցարգուշի հետ: Մրցակիցն ուժեղ էր եւ հաղթելով, 2-րդ անգամ արժանացավ Եվրոպայի չեմպիոնի տիտղոսին: Իսկ Մուսա Մուրթազալիեւը ստիպված էր բավարարվել արծաթե մեդալով:**

**Մինչեւ 96 կգ քաշային կարգում Հայաստանը ներկայացրած Էդգար Ենոքյանը 1/8 եզրափակիչում 2-0 հաշվով հաղթելով բուլղարացի Կրասիմիր Կոչեւին, հաջորդ գոտեմարտում 0-4 հաշվով զիջեց ադրբեջանցի Խեթագ Գազյումովին: Վերջինս հասավ մինչեւ եզրափակիչ, որտեղ հաղթելով ռուսաստանցի Վլադիսլավ Բայցաեւին, նվաճեց Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը: Դա հնարավորություն ընձեռեց Ենոքյանին պայքարելու բրոնզե մեդալի համար: Առաջին գոտեմարտում նա 7-4 հաշվով հաղթեց բելառուսցի Իվան Յանկովսկուն, սակայն վճռորոշ հանդիպման ժամանակ պարտություն կրեց մոլդովացի Նիկոլայ Չեբանից (1-4) ու զրկվեց բրոնզե մեդալից:**

**Անհաջող էր մինչեւ 60 կգ քաշային Աշոտ Տերտերյանի ելույթը: Նա պայքարից դուրս մնաց առաջին գոտեմարտից հետո՝ զիջելով Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ Կրասիմիր Կրաստանովին:**

**Քաշային այս կարգում ուժեղագույնը ռուսաստանցի Օպան Սատն էր, որը եզրափակիչում հաղթեց ալբանացի Սահիտ Պրիզրենիին: Սատը դարձավ Եվրոպայի կրկնակի չեմպիոն: Բրոնզե մեդալները բաժին հասան բուլղարացի Անատոլի Գույդյային եւ ուկրաինացի Վասիլի Ֆեդորիշինին:**



# Երեք մրցանակակիր Չեխիայում

**Չեխիայի Ուստի նադ Լաբեմ քաղաքում անցկացված բռնցքամարտի միջազգային մրցաշարում ՀՀ հավաքականի կազմում ռինգ դուրս եկած 4 բռնցքամարտիկներից երեքը դարձան մրցանակակիրներ: Բրոնզե մեդալներ նվաճեցին Հրաչյա Ջավախյանը (64 կգ), Արա Պլուզյանը (60 կգ) եւ Տիգրան Արմենակյանը (75 կգ):**

**Հայաստանի հավաքականի անդամների համար ուժերի հաջորդ ստուգատեսը կլինի ապրիլի 11-17-ը Երեւանում անցկացվելիք միջազգային մրցաշարը, որում կխաղարկվեն ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանի անվան մրցանակները: Մրցաշարին մասնակցելու հայտ են ներկայացրել արդեն 20 երկրներ, որոնց թվում են Ռուսաստանը, Ուկրաինան, Ղազախստանը, Անգլիան եւ Վրաստանը:**

# Պավլյուչենկոն վերջ դրեց գոլային երաշտին

**Ընտրական մրցախաղերից ազատ հավաքականներից շատերն իրենց ուժերը փորձեցին ընկերական հանդիպումներում: Երեւանից Քաթար մեկնած ՌԴ հավաքականը տանտերերի հետ խաղում էլ չկարողացավ հաղթանակ տոնել: Դոհայում կայացած այդ խաղում արդեն 4-րդ րոպեին դաշտի տերերից Կասոլան բացեց հաշիվը: Միայն 34-րդ րոպեին Ռոման Պավլյուչենկոյին հաջողվեց ընդհատել ՌԴ հավաքականում 385 րոպե շարունակ տեւած գոլային երաշտը ու խոցել մրցակցի դարպասը: Խաղն ավարտվեց ոչ-ոքի՝ 1-1: Արդեն 4 խաղ է, ինչ ՌԴ հավաքականին չի հաջողվում հաղթանակ տոնել:**

**Ընտրական 2-րդ խմբում ՀՀ հավաքականի մրցակիցներից ստուգողական հանդիպումներ անցկացրին նաեւ Իռլանդիայի եւ Սլովակիայի հավաքականները: Իռլանդացիները սեփական հարկի տակ 2-3 հաշվով զիջեցին Ուրուգվայի հավաքականին: Արդեն 13-րդ րոպեին հյուրերը Լուգանոյի հարվածից հետո հաշվի մեջ առաջ անցան: Հետագայում Լոնգը վերականգնեց հավասարակշռությունը, սակայն մինչեւ ընդմիջում հյուրերը եւս 2 գոլ խփեցին: 2-րդ խաղակեսի սկզբին Ֆեխին 11 մ հարվածով կրճատեց հաշիվը:**

**Սլովակիայի հավաքականն էլ սեփական հարկի տակ 1-2 հաշվով զիջեց դանիացիներին: Որոշ չափով անակնկալ էր Գերմանիայի հավաքականի պարտությունը սեփական հարկի տակ ավստրալացիներից (1-2): Սակայն պետք է հաշվի առնել, որ գերմանացիների կազմում խաղադաշտ էին դուրս եկել մի շարք նորեկներ, որոնց գլխավոր մարզիչ Յոահիմ Լյովը հնարավորություն էր տվել դրսեւորելու իրենց ունակությունները:**

**Ուկրաինայի հավաքականը Կիեւում 0-2 հաշվով զիջեց իտալացիներին, որոնցից գոլերի հեղինակներ դարձան Ռոսին եւ Մատրին: Անգլիա-Գանա խաղում գրանցվեց ոչ-ոքի՝ 1-1: Ընդ որում Կերոլի գոլին հյուրերը պատասխանեցին ավելացված ժամանակում Գյանի խփած գնդակով: Պորտուգալացիները 2 անպատասխան գնդակ ուղարկեցին ֆինների դարպասը: Ֆրանսիա-Խորվաթիա, Հունաստան-Լեհաստան հանդիպումներում դարպասները մնացին անառիկ: Բուլղարացիները հյուրընկալվելիս 1-0 հաշվով հաղթեցին Կիպրոսի ընտրանուն: Չիլի-Կոլումբիա խաղն ավարտվեց դաշտի տերերի հաղթանակով (2-0):**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

## Օրվա հետքերով

# Մոսկվան Կովկասում «չի խաղում»

Այս մասին հայտարարել է Ռուսաստանի ԱԳՆ 4-րդ՝ ԱՊՀ գործերով զբաղվող բաժանմունքի Կովկասի բաժնի տնօրեն **Անդրեյ Կելինը** «Ռուսաստանի ձայն» ռադիոկայանի հետ հարցազրույցում՝ խոսելով Կովկասում Ռուսաստանի դերի, տարբեր հակամարտությունների մասին: Կելինի խոսքերով Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը հետխորհրդային տարածքում եղած հակամարտություններից ամենաբարդն է: Նշելով ՌԴ ակտիվ ներգրավվածությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության բանակցային գործընթացում՝ ռուս փորձագետը ասել է, թե ներկայումս խոսքը հակամարտության լուծման սկզբունքների մշակման մասին է: «Խնդիրը հետեւյալն է. ժամանակին մշակվել են Մադրիդյան սկզբունքները: Մինչ այժմ դրանք բավականին ձեւափոխվել են, սակայն մենք շարունակում ենք աշխատել նույն հենքով, որ այն ժամանակ առաջարկել էին Մինսկի խմբի միջնորդները՝ ՌԴ-ն, Ֆրանսիան ու Միացյալ Նահանգները: Նրանք կազմել են առաջնային ընտրությունը: Այժմ մեր ղեկավարները փորձում են հստակեցնել դրանք, եւ այդ առումով բավականին արդյունավետ աշխատանք է կատարվում: Դա շատ տքնաջան աշխատանք է: Իրականում համատեղ երկարաժամ հանդիպումներ են անցկացվում, որպեսզի ծավալուն ձեւակերպումները հստակեցվեն: Ռուսաստանը համադրում է իր գործունեությունը պաշտոնապես լիազորված ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեության հետ, քանի որ դա ընդհանուր առմամբ միջազգային ջանքեր են: Իսկ այժմ այնպիսի մի փուլ է, երբ նախաձեռնությունը պետք է լինի մեր ձեռքերում. այսինքն՝ ռուսական, որպեսզի տարացիորեն կողմերին քայլ առ քայլ բերեն խաղաղ համաձայնության: Մինսկի խմբի մեր գործընկերները՝ ամերիկացիներն ու ֆրանսիացիները, մեր այս ջանքերը գնահատելով՝ ասում են՝ խնդրեմ, շարունակեք: Հիմա, երբ կմշակվեն սկզբունքները, դրանց հիման վրա պետք է սկսվի խաղաղ համաձայնագրի կառուցումը: Հետո արդեն հնարավոր են դրական հանգուցալուծումներ», ասել է ռուս դիվանագետը: Կելինը ափսոսանք է հայտնել նաեւ շփման գծում լարվածության պահպանման առնչությամբ:

«Եթե չդադարեցվի այդ լարվածությունը, ապա տհաճ զարգացումներ են հնարավոր: Այդ իսկ պատճառով անում ենք ամեն ինչ՝ կանխելու համար», ասել է Կելինը: Հարցազրույցում պաշտոնական Մոսկվայի ներկայացուցիչը խոսել է հակամարտության հարցում Իրանի ու Թուրքիայի շահագրգռվածությունից եւս: «Գաղտնիք չէ, որ նրանք շահագրգռված են եւ ոչ մեկ անգամ են առաջարկել միանալ գործընթացին, որեւէ կերպ օժանդակել: Սակայն, իրականում, ամեն ինչ կախված է հակամարտության կողմերից՝ Հայաստանից ու Ադրբեջանից: Անհրաժեշտ է, որ երկխոսության ու կարգավորման պատրաստակամության հարցում քաղաքական կամքը հաղթանակի: Հնարավոր է՝ ինչքան քիչ արտաքին կարծիքներ լինեն բանակցային սեղանին, այդքան ավելի հեշտ երկու երկրների ղեկավարները պայմանավորվածություններ ձեռք բերեն: Այժմ ակնհայտ երեւում է, որ նրանց ավելի հեշտ է համաձայնությունների գալ ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւի, ես կասեի, շատ ակտիվ միջնորդությամբ: Մեր նախագահի դերին ամեն կերպ սատարում են ԵԱՀԿ Մինսկի խմբի այլ անդամները եւս», ասել է Կելինը, ընդգծելով, սակայն, թե ամեն դեպքում մեծ լավատեսություն դեռ շուտ է ցուցաբերել կարգավորման առնչությամբ: «Այժմ ընթանում է բանակցային փուլը: Կուզենայի հուսալ, որ սկզբունքները կմշակվեն, եթե, իհարկե, առաջնահերթությունների փոփոխություններ կամ այդ երկրներում քաղաքական տրամադրությունների կտրուկ հետընթաց չարձանագրվի, ինչը նույնպես չի բացառվում: Հնարավոր են իշխանափոխություններ: Եթե իշխանությունները փոխվեն, ապա նոր ղեկավարությունը պետք է նորովի մոտենա ու վերանայի արվածը: Սակայն հույս ունենք, որ դա տեղի չի ունենա», նշել է Կելինը: Ի դեպ, կապված արաբական հեղափոխությունների հետ՝ ռուս դիվանագետը նկատել է, որ Կովկասում դեպքերի նման զարգացում դժվար է պատկերացնել, քանի որ «Մերձավոր Արեւելքը բոլորովին այլ աշխարհ է: Բացի դրանից՝ իշխանությունները վերահսկում են առաջին հերթին ուժային ոլորտները, սա վերաբերում է Հայաստանին, Վրաստանին, Ադրբեջանին, էլ չեմ խոսում՝ Հարավային Օսիայի եւ Աբխազիայի մասին», թվարկելով Հարավային Կովկասի բոլոր՝ դե յուրե եւ դե ֆակտո անկախ երկրները եւ շրջանցելով դրանցից մեկին», եզրափակել է ՌԴ ԱԳՆ պաշտոնյան:

Հ. ԱՓՅԱՆ

# Թե որտե՞ղ էր Օսկանյանը 1999-ի հոկտեմբերի 27-ին, եւ... Քի Վեսթի մասին

**«ՀՀ ԱԺ-ում տեղի ունեցած ահաբեկչության զոհ կարող էր դառնալ նաեւ ՀՀ ԱԳ նախկին նախարար Վարդան Օսկանյանը», Վաշինգտոնի Քարնեգի հիմնադրամում կազմակերպված ԼՂ հակամարտության կարգավորմանը նվիրված համաժողովի ժամանակ հայտարարել է ԵԱՀԿ ՄԽ ամերիկացի նախկին համանախագահ Քերի Քավանոն: Մարտի 28-ին Վաշինգտոնի Կարնեգի հիմնադրամում տեղի է ունեցել ԼՂ հակամարտությանը նվիրված համաժողով, որին մասնակցել են ԵԱՀԿ ՄԽ ամերիկացի նախկին եւ ներկա համանախագահներ Քերի Քավանոն եւ Ռոբերտ Բրադկեն: «Ամերիկայի ձայն»-ի փոխանցմամբ, Քերի Քավանոն, անդրադառնալով ԼՂ հակամարտության կարգավորման բանակցային գործընթացներին, իր խոսքը սկսել է 1999-ի հոկտեմբերի 27-ի ՀՀ խորհրդարանում տեղի ունեցած ոճրագործության վերաբերյալ հիշեցումից ու մասնավորապես ասել, թե ՀՀ ԱԺ-ում տեղի ունեցած ահաբեկչության զոհ կարող էր դառնալ նաեւ ՀՀ ԱԳ նախկին նախարար Վարդան Օսկանյանը, բայց նա խորհրդարանում կառավարության հետ հարցուպատասխանին մասնակցելու փոխարեն իրեն եւ մյուս համանախագահողների հետ «Զվարթնոց» օդանավակայանի ճանապարհին է եղել: «Նրանք մեկնում էին Թուրքիա, որտեղ պիտի հանդիպեին այդ երկրի նախագահ Սուլեյման Դեմիրելին՝ ԼՂ բանակցային գործընթացը քննարկելու նպատակով», հայտարարել է Քավանոն: Վերջինս նաեւ անդրադարձել է համանախագահության իր ժամանակահատվածում նախաձեռնված՝ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների Քի Վեսթի հանդիպմանը: «ԵԱՀԿ ՄԽ համանախագահները վստահ էին, որ Քի Վեսթում խաղաղության համաձայնագիր չի ստորագրվելու»: Քավանոյի փոխանցմամբ, 2000թ. սկզբին, երբ Ջորջ Բուշ կրտսերը դեռ նոր էր ստանձնել ԱՄՆ նախագահի պաշտոնը, իր պաշտոնավարման առաջին իսկ շաբաթվա ընթացքում ակտիվորեն ներգրավվել էր ԼՂ բանակցություններում՝ հույս ունենալով խթանել կարգավորման գործընթացը: «Դա նաեւ պայմանավորված էր այն հանգամանքով, որ այդ փուլում միջազգային ասպարեզում ճգնաժամային իրավիճակները շատ չէին, եւ լավ հնարավորություն էր ստեղծվել՝ ԼՂ հարցում արագ լուծումներ գտնելու», հայտարարել է Քավանոն՝ հավելելով, թե այդ պարագայում առկա էր նաեւ միջազգային կառույցների եւ մի շարք արեւմտյան պետությունների՝ ֆինանսական աջակցություն տրամադրելու պատրաստակամությունը: «Սակայն այդ կարգավորումը չեղավ՝ ավելի ուշ Մերձավոր Արեւելքում տեղի ունեցած գործընթացների պատճառով», նշել է Քավանոն: Նշենք, որ հենց Քավանոն է համարվում է 2000-2001թթ. «Քիվեսթյան գործընթաց»-ի հիմնական նախագծողներից մեկը:**

Հ. Ա.

# Թուրքիան աջակցում է Ադրբեջանին Ստեփանակերտի օդանավակայանի հարցում

**«Ստեփանակերտում կառուցվող օդանավակայանում ինքնաթիռների վայրէջքների ու վերելքների հարցը պետք է լուծվի միջազգային իրավունքին համապատասխան», երեկ հայտարարել է Ադրբեջանում Թուրքիայի դեսպան Հուլուսի Քըլիչը:**

**«Ընդունված որոշումը պետք է հիմնվի միջազգային իրավունքի վրա եւ չհակասի Ադրբեջանի շահերին», ասել է դիվանագետը՝ նշելով, որ Թուրքիան միշտ Ադրբեջանի կողքին է եղել բոլոր հարցերում, այդ թվում՝ Ստեփանակերտի օդանավակայանի շինարարության, փոխանցում է «Նովոստի Ադրբեջան» գործակալությունը:**

**Զարմանալի է թուրք դիվանագետի դիրքորոշումը առ այն, որ նա խոսում է միջազգային իրավունքի մասին՝ պաշտպանում Ադրբեջանի շահերն այն պարագայում, երբ հենց Ադրբեջանն է խախտում իր ընդունած պարտավորությունները: Ադրբեջանն ու Հայաստանը ICAO անդամ են եւ ունեն մի շարք պարտավորություններ: Դրանցից մեկն էլ այն է, որ որեւէ պետություն իրավունք չունի ռմբակոծելու որեւէ այլ պետության քաղաքացիական ինքնաթիռները: Եթե ադրբեջանական կողմը նման քայլի դիմի, ապա հայկական կողմը ոչ միայն անհրաժեշտ միջոցառումներ կձեռնարկի պատասխան հարված տալու համար, այլեւ կդիմի ICAO-ին՝ Ադրբեջանի հանդեպ սանկցիաներ կիրառելու եւ նրան կազմակերպությունից վտարելու համար:**

**Հիշեցնենք, որ Ադրբեջանի քաղաքացիական ավիացիայի պետական աշխատակազմի տնօրեն Արիֆ Մամեդովը դեռ մեկ ամիս առաջ հայտարարել էր, որ Ադրբեջանը կոչնչացնի Ստեփանակերտի օդանավակայանում վայրէջք կատարող ինքնաթիռները: Ադրբեջանական կողմը Քաղավիացիայի միջազգային կազմակերպությանը՝ ICAO-ին նամակ է հղել՝ հայտարարելով, որ ադրբեջանական օդային տարածքը Ղարաբաղի վերեւում փակ է, հետեւաբար իրենք կոչնչացնեն այդ տարածքում վայրէջք կատարող ինքնաթիռները: Վերոնշյալ հայտարարությունն արժանացավ Հայաստանում ԱՄՆ դեսպան Մարի Յովանովիչի եւ Ադրբեջանում ԱՄՆ դեսպան Մեթյու Բրայզայի բացասական վերաբերմունքին ու քննադատությանը:**

**«Ազգ»-ի հետ զրույցում Արցախի Հանրապետության նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչության պետ Դավիթ Բաբայանն էլ ասաց, որ միջազգային հանրությունը պետք է համարժեք գնահատական տա պաշտոնական Բաքվի նման հայտարարություններին, որոնք բացահայտ քրեական տարրեր են պարունակում: Բաբայանը նշել է, որ սպառնալիքներով Ադրբեջանը փորձում է ահաբեկել արցախցիներին ու վախի մթնոլորտ ստեղծել, որպեսզի ԼՂՀ քաղաքացիները չօգտվեն օդանավակայանից:**

**«Վճռական ենք Ստեփանակերտի օդանավակայանը գործարկելու հարցում եւ ոչինչ մեզ չի խանգարի դա իրականացնել: Կօգտագործենք Արցախի օդային տարածքը անկախ հանգամանքից՝ դա դուր է գալիս Ադրբեջանին, թե ոչ: Իսկ եթե Ադրբեջանը փորձի իրականացնել ասածը, դա անկանխատեսելի հետեւանքներով հղի կլինի հենց Ադրբեջանի համար»:**

ՀԱՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Միջինք

Այս տարի մարտի 30-ին Հայ առաքելական եկեղեցին նշում է Միջինքը: Ըստ Մաղաքիա արք. Օրմանյանի՝ Միջինքը կիսում է Մեծ պահքը՝ նշվելով Մեծ պահքի 24-րդ օրը: Այդ օրը պահեցողները պահքը պահել չեն դադարում: Սակայն, ըստ ժողովրդական ավանդության, տանտիկինները թխում են բաղարջ, անթթխմոր գաթա, որի մեջ մետաղադրամ են դնում: Այժմ մետաղադրամի փոխարեն արդեն պատրաստի գաթայի մեջ տակից աննշան դնում են թղթի վրա գրված աստվածաշնչյան պատգամ:

Միջինքից սկսած ժամերգությունները երկարում են: Սովորական շարականները փոխվում են ստեղիներով, այսինքն շարականները կատարվում են ավելի ծանր եղանակով:

**Արարատյան Հայրապետական թեմի Մամլո դիվան**

## ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ

հետեւյալ ամբիոնների վարիչների պաշտոնատեղերի զբաղեցման համար.

1. բարձրագույն մաթեմատիկայի եւ ինֆորմատիկայի,
2. ընդհանուր ֆիզիկայի,
3. անտառագիտության,
4. ընդհանուր տնտեսագիտության,
5. տուրիզմի կառավարման եւ մշակութաբանության,
6. պատմության եւ քաղաքագիտության,
7. հայոց լեզվի եւ գրականության,
8. մանկավարժության եւ հոգեբանության,
9. դեկորատիվ կիրառական արվեստի,
10. գծանկարի եւ գունանկարի,
11. օտար լեզուների,
12. ֆիզիկական դաստիարակության եւ քաղպաշտպանության:

Ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման մրցույթին կարող են մասնակցել գիտությունների թեկնածուի (դոցենտի), դոկտորի (պրոֆեսորի) գիտական աստիճան (կոչում) ունեցող անձինք, ովքեր ունեն առնվազն հինգ տարվա գիտամանկավարժական աշխատանքի ստաժ: Բացառություն են կազմում դեկորատիվ կիրառական արվեստի, գծանկարի եւ գունանկարի, ֆիզիկական դաստիարակության եւ քաղպաշտպանության ամբիոնների վարիչների պաշտոնների հավակնորդները, որոնց համար գիտական աստիճանի (կոչման) առկայությունը պարտադիր չէ:

Հավակնորդները ԵՊՀ Իջեւանի մասնաճյուղի կադրերի բաժին են ներկայացնում .

- ▼ դիմում տնօրենին,
- ▼ կադրերի հաշվառման անհատական թերթիկ,
- ▼ քաղվածք աշխատանքային գրքույկից,
- ▼ համառոտ ինքնակենսագրություն,
- ▼ գիտական (որակավորման) աստիճանը եւ գիտական կոչումը հաստատող փաստաթղթերի պատճեններ,
- ▼ տպագրված գիտական եւ մեթոդական աշխատանքների ցուցակը,
- ▼ տվյալներ պարգեւատրումների, մրցանակների եւ պատվավոր կոչումների վերաբերյալ:

Գործերն ընդունվում են սույն հրապարակումից 30 օրվա ընթացքում:

Մանրամասն տեղեկությունների համար դիմել ԵՊՀ Իջեւանի մասնաճյուղի կադրերի բաժին:

Հասցեն՝ Ք. Իջեւան, Ուսանողական N 3,
հեռ. (0263) 4 – 04 – 50:

## Հայտարարություն

Ս.թ. ապրիլի 8 -ին, ժամը 12:00-ին ՀՀ Շիրակի մարզի Տուֆաշենի գյուղապետարանում տեղի կունենան «Սերպանտին» Ակ-ի կողմից ներկայացված Արթիկի տուֆի հանքավայրի «Դիգ» տեղամասի շահագործման շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ: Տեղեկությունների համար դիմել ք. Երևան, Կոմիտասի 28: Հեռ. (010) 220218, (010) 221485, (010) 221568, (093) 915380

**«Ազգ օրաթերթ» ՍՊԸ**
**Տարեկան հաշվետվություն 2010թ.**

| | |
|---|---|
| Համախառն եկամուտ /հազ. դր./ | |
| այդ թվում | |
| | |
| Թերթի իրացում,հայտարարություններ և գովազդ | 43850.0 |
| Սուբսիդիա | 650.0 |
| Ընդամենը | 44500.0 |
| | |
| Ծախսեր /հազ. դր./ | |
| այդ թվում | |
| | |
| Թերթի տպագրման և իրացման | 9585.0 |
| Աշխատավարձ | 20946.6 |
| Սոց վճար գործատուի հաշվին | 4549.0 |
| Այլ | 9643.0 |
| Ընդամենը | 44723.6 |
| Համախառն հաշվապահական վնաս | -223.6 |

*Տնօրենություն*

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 30.3.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: